№ 33 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14

1906

ԵՐԵՔՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14 № 33

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆօն № 253.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ **1906** ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 րուբլի: Փետրվարի 1-ից մինչև 1 յունիսի 3 րուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլլար: Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի:

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն): Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից:

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ" իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
«ՄՈՒՐՃ» ամսագրի յունվարի համարը

Շարունակվում է 1906 թ. բաժանորդագրութիւնը. տարեկան 10 րուբլի (արտասահմանի համար 12 ր.), ուսուցիչների և ուսանողների համար 8 րուբլի: Բաժանորդագինը կարելի է վճարել և մաս-մաս: Նոր բաժանորդները ձրիաբար ստանում են 1905 թ. № 11—12 «Մուրճ»-ը: Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, редакцію «Мурчъ».

1—3

Գ. ԵՍ. ԱՒՍԱՐԿԻՍՕՎԻ
ԱՅԳՈՒ ԾԱՌԵՐԻ
ՏՆԿԱՐԱՆ

Ծախվում են պտղատու ծառեր արտասահմանեան, ռուսական և կովկասեան տեսակներ: Հասցէն՝ ст. Скра Зак. Жел. Дор. Авсаркисову. Ցուցակը ուղարկվում է ձրիաբար:

1—10

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մօտենում է ժամանակը. Մի կոչ ի նպաստ խաղաղութեան. Վերջին տեղեկութիւններ. Բարձրագոյն անուանական հրովարտակ կառավարչական սենատին. Մամուլ. Նամակ Ղափանից. Յիշողութիւններ մօտիկ անցեալից. Ա. Վ. Կրիվիցկի. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր. Ոստիկանական տեղեկութիւններ.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պարսկաստանի սահմանադրութիւնը. Նամակ Պարսկաստանից. Ամերիկայի ձայնը. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՄՕՏԵՆՈՒՄ Է ԺԱՄԱՆԱԿԸ

I

Մի սոսկալի տրամադրութիւն է տիրում հայ գիւղական աշխարհում: Գարունը մօտենում է, իսկ հայ հողագործը վստահ չէ, որ նա կարող կը լինի պարապվել իր սովորական արհեստով և ապահովել իր համար տարեկան ապրուստի մթերքներ:

Բուն հայկական շրջաններում, ուր ազգաբնակութիւնը երկիւղ չունի Թուրքական արշաւանքներից, գիւղացին դեռ կարող է զբաղվել երկրագործութեամբ, իսկ այն տեղերում, ուր եղել են անցեալ տարի ընդհարումներ և հայերի ու Թուրքերի յարաբերութիւնները լարված են, հայ գիւղացին չի վստահանայ դաշտը դուրս գալ և հողի մշակութեամբ զբաղվել: Նա կը պահանջի հաստատ ապահովութիւն իր անձի համար:

Իսկ եթէ մեր գիւղացին չի մշակի իր հողը կամ նրան կը մշակի շատ սահմանափակ կերպով, այն ժամանակ, մեր երկրի մի խոշոր մասը դատապարտված կը լինի սովի և ծայրահեղ զրկանքների:

Երբ որ կարօտութեան մէջ են առանձին անհատներ, կամ մի քանի գիւղեր, դրանք տանելի թշուառութիւններ են, նրանք մասնաւոր աղէտներ են, որոնց դէմ կարելի է կռւել առանց չափազանց մեծ դժուարութիւնների, բայց երբ հարիւրաւոր գիւղեր են աղէտի ենթարկված, երբ տասնեակ հազարաւոր տներ են մնացել են առանց հացի և ուրիշ մթերքների, այն ժամանակ չափազանց դժուար է բաւարար կերպով լուծել ժողովրդի ապահովութեան խնդիրը: Այդտեղ պահանջվում են չափազանց խոշոր գումարներ՝ հարիւր հազարներ և միլիոններ:

Նախիջևանի գաւառը, որ անցեալ տարի այնքան սարսափելի կերպով վնասվել էր Թուրքական արշաւանքներից, եթէ կարողացաւ մի կերպ դիմանալ և տանել իր թշուառութիւնները, դա շնորհիւ այն բանի էր, որ արտերը վաղօրօք ցանված էին և տարվայ պաշարները գտնվում էին դաշտերում: Եւ թէև հայ գիւղացիները անկարող եղան ստանալ հողից այն, ինչ որ նրանք պէտք է ստանային, այնուամենայնիւ հաւաքեցին այնքան մթերք, որ կարող եղան իրանց կարիքների մի նշանաւոր մասը լրացնել: Մանաւանդ որ տարին էլ բարեբեր տարի էր և նպաստաւոր հունձի համար:

Չը նայելով այդ հանգամանքին, ինչպէս մենք գիտենք, Նախիջևանի գաւառի հայ գիւղացիները դարձեալ սարսափելի կարօտութեան մէջ էին և թէև նպաստամատոյց յանձնաժողովները օգնում էին, այնուամենայնիւ մեծ զրկանքներ կրեցին թէ ուտելու մթերքների և թէ ուրիշ իրանց կարիքների կողմից: Իսկ եթէ նրանք անկարող եղած լինէին իրանց ցանքսերը շահագործելու, այն ժամանակ այնտեղ սկսված կը լինէր կատարեալ սով և աննկարագրելի թշուառութիւն:

Իւրաքանչիւր գիւղացու պահանջը մեծ չէ և նա զրկանքների սովոր է, բայց նրանք շատ են թւով և բացի իրանց ուտելու հոգսից, ունեն շատ ուրիշ տնային հոգսեր և նոյնպէս պարտաւորութիւն վճարելու պետական տուրքեր, որոնք վերցվում են նոյն գիւղատնտեսական զբաղմունքից:

Եթէ ձմեռվայ ընթացքում մենք դեռ կարող էինք ծանր ու բարակ դատողութիւններ անել գարնանային և ամառվայ աշխատանքների մասին, այժմ այլ ևս չենք կարող անտարբեր լինել դէպի մեր գիւղականի դրութիւնը: Այժմ ոչ թէ ամիսները, այլ շաբաթները և օրեր, սկսում են նշանակութիւն ստանալ: Հերկը և ցանքսը պէտք է կատարվեն իրանց ժամանակին, որպէս զի արդիւնաւէտ լինեն և տան բաւարար հետևանքներ:

Բայց մենք չենք ստացել մեր գաւառներից դեռ այնպիսի մխիթարական հաւաստիացումներ, որոնք վկայէին թէ սկսվում է իրական և հաստատ ապահովութիւն հայ-Թուրքական ընդհարումների շրջանում: Եւ ընդհակառակը շշուկներ են լսվում նոր սպառնական պատրաստութիւնների մասին Թուրքերի կողմից:

Անկասկած, մեզնից իւրաքանչիւրը կը ցանկանար, որ այդ կասկածները սուտ դուրս գային և մեր երկրի գիւղականը նուիրվէր իր սովորական աշխատանքին:

Հայը երբեք կռւել չէ ցանկացել և չէ ցանկանում: Անհրաժեշտ է, որ մեր Թուրք հարևանն էլ հաստատ ապացոյցներ տայ, թէ նա վերջ է տուել այն արշաւանքներին, որոնք սև էջ բաց արին մեր երկրի պատմութեան մէջ անցեալ տարվայ ընթացքում:

Ա. Քալանթար

ՄԻ ԿՈՉ Ի ՆՊԱՍՏ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ

Մարոկկոյի հարցի առիթով Գերմանիայի և Ֆրանսիայի մէջ բռնկված դիպլոմատիական սուր ընդհարումները, երկու երկիրների մամուլի գործածած խիստ լեզուն, Ալճեզիրաս քաղաքում այդ հարցը լուծելու համար գումարված միջազգային կոնֆերենցիայի աշխատութիւնների անաջողութիւնը—մեծ երկիւղ են առաջ բերել, որ մենք գուցէ մի նոր պատերազմի, ֆրանս-գերմանական մի նոր ճակատամարտի շէմքի վրա ենք կանգնած:

Եւ, բնականաբար, խաղաղութեան բոլոր բարեկամները ոտքի են կանգնել և հնչեցնում են իրանց փողերը ի լուր աշխարհի, թէ՝

«Ազգեր, դատապարտեցէք պատերազմը:

«Ազգեր, դաշնակցեցէք իրար հետ:

Այս կոչով են հրապարակ եկել Ֆրանսիայի, Գերմանիայի և Անգլիայի բոլոր խաղաղասէրները և այս խօսքերով են սկսում իրանց յորդորը, ու շարունակում,

«Ծայրագոյն Արևելքի պատերազմը ցոյց տուեց մի անգամ ևս պատերազմի բոլոր գազանութիւնները, բոլոր անառակութիւնները:

Այդպիսի ցաւալի դասեր չը պէտք է երբէք մոռացվեն:

Ազգեր, ժամանակ է կազմակերպել Խաղաղութիւնը: Լա-Հէյի երկրորդ վեհաժողովը լաւ առիթ է դրա համար, շտապեցրէք նրա գումարումը. զբաղվեցէք նրա ծրագրով:

Յայտնեցէք ձեր կառավարութիւններին, բոլոր երկրներում, որ դուք չէք կամենում ոչ կոտորել, ոչ ձեզ կոտորել տալ, որ դուք այլ ևս չէք կամենում պատերազմ, որ յաւիտենականացնում է, փոխանակ խաղաղացնելու, պետութիւնների թշնամութիւնները, որ քայքայում է ամեն մի ազգի ֆինանսները, աւելացնելով հարկերը, նուաստացնելով մինչև փոխառութիւնը օտարից, կանգնեցնում է ընդհանուր կեանքը, դադարեցնում է հասարակական գործերի ընթացքը, վռնդում է աշխատութիւնը գործարաններից, փակում է նաւահանգիստները, հեռացնում է յաճախորդ-գնողներին յօգուտ ուրիշ երկիրների, վտանգում է կրեդիտը, զրկում է տալիս խնայողական դրամատների աւանդները, իջեցնում է արժէթղթերի գինը, աղքատացնում հարուստին, և աւելի թշուառացնում է չունևորին, աճիւն է դարձնում նիւթական գոյքերը, ապականում է մարդկային բարոյականութիւնը, կազմակերպում սպանութիւնը և անիշխանութիւնը, մորթում է, կողոպտում է, հրդեհում է, բռնաբարում է և վերջապէս—ինչպէս ցոյց է տալիս Ռուսաստանը և ցոյց է տուել Ֆրանսիան—ամեն ազգի մէջ քաղաքացիներին իրար դէմ է հանում և դառնում է դասակարգերի պատերազմ, ցեղերի պատերազմ լինելուց յետոյ:

Որպէս զի ձեզ մղեն պատերազմի գժութեան, ձեզ խօսում են հայրենիքի շահերի, հմայքի և պատուի մասին:

Հայրենիքի շահը՝ խաղաղութեան մէջ է, նրա հմայքը՝ այն բարիքի մէջ, որ նա անում է, նրա պատիւը՝ արդարութեան յարգանքի մէջ:

Ժողովուրդներ, ասացէք մի խօսք և իրաւունքը կը ջնջէ ուժը: Խաղաղութիւնը կարող է ապահովվել արդարութեան յարգանքի գործադրութեամբ ազգերի մէջ, և ճանաչելով այն վեհ սկզբունքը թէ ազգերը իրաւունք ունեն ազատօրէն տրամադրել իրանց:

Ազգեր, արտայայտեցէք միասին ձեր միահամուռ խաղաղասիրական զգացմունքները: Հասկացնել տուէք ձեր կառավարութիւններին, կարծիքի մի խրոխտ շարժումով, թէ ինչ էք պահանջում նրանցից: Դուք պահանջում էք նրանցից, որ նրանք թողնեն վերջապէս կռուարար կոմբինացիաները, յանցաւոր նենգութիւնները, երկդիմի կօալիցիաները և նուիրեն իրանց խնամքն միմիայն—միջազգային հաշտութեան:

Պահանջեցէք հրամայողաբար ձեր կառավարութիւններից, որ նրանց պատուիրակները Լա-Հէյի կոնֆերենցիայում հաստատեն իրաւարարութեան պարտաւորութիւնը և պատրաստեն ընդհանուր միջազգային դաշնակցութեան կազմակերպութիւնը: Այդ միջազգային դաշնակցութիւնը, որի մէջ ամեն մի ազգի ազատութիւնը և վեհապետութիւնը սահմանափակված կը լինեն ուրիշ ազգերի ազատութեամբ և վեհապետութեամբ, առանց հարուած հասցնելու հայրենիքների անկախութեան, կամրապնդի նրանց ապահովութիւնը և կը նպաստէ նրանց առաջադիմութեան:

Պատասխանեցէք այս Խաղաղասիրական կոչին: Թող բոլոր պարկեշտ անձինք վեր կենան, բոլոր երկիրներում, դատապարտելու համար պատերազմը:

Գնանք միասին դէպի խաղաղութիւն, Արդարութիւն ազգերի միջազգային Դաշնակցութեան միջոցով, ազգերի, որոնք աւտօնօմ են համերաշխութեամբ»:

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Գանձակ, 12 փետրվարի

Երէկ, փետրվարի 12-ին, քաղաքում գտել են սպանված մի հայ, Կօնջարեանց ազգանունով, որին սպանելուց յետոյ, դիակը այլանդակել են: Սպանողների մէջ եղել են, ի միջի այլոց, և չայրեւցի Թուրքեր: Իշխանութիւնը գտել է յանցաւորներին և բանտարկել է:

Ղազախի գաւառում իշխանութիւնը հաւաքելով զէնքերը, այրում է այդ զէնքերը ժողովրդի առաջ:

Փետրվարի 8-ին

Որովհետև հայկական լրագիրներում դեռ մինչև այսօր չէ յայտարարված օգոստոսեան օրերի կրած հայ բանւորների վնասի հատուցման չափը նաւթարդիւնաբերողների կողմից, և որ գլխաւորն է, դեռ գաւառներում կան ուշացած բանւորներ, որոնք մասնաւոր նամակներով դիմում են զանազան անհատների և տեղեկութիւն խնդրում, ուստի՝ կարծում եմ, աւելորդ չի լինի մի փոքրիկ բացատրութիւն տալ այդ խնդրի վերաբերմամբ:

Բիւրօյի գրած նորման չընդունվելուց յետոյ, պ.պ. նաւթարդիւնաբերողները բարեհաճեցին ընդունել ամուրիների երկու ամսվայ և ընտանիքաւորների չորս ամսվայ վնասի հատուցման չափը, վերածելով օրավարձ բանւորի ռոճիկն էլ ամսականի. և այդ էլ դեռ իրանց կամքով, իբրև շնորհք, այլապէս՝ ոչ ոք պարտաւոր չէր ծառայողների վնասը հատուցանելու, որովհետև վնասվողները ամբողջապէս հայեր էին...

Դոնաւարդ գիւղ (Շուշու գաւառ), փետրվարի 7-ին

Կրիտիկական րոպէներ է անցկացնում Վարանդայի հայ գիւղացին: Անցեալ 1905 թ. անբերրիութիւնը, Թուրք-հայկական ընդհարումները, հաղորդակցութեան դժուարութիւնները ստեղծել են մի անտանելի վիճակ հայի համար: Չը կայ հաց, չը կայ և աշխատանքի ճանապարհ, որ աշխատաւորը կարողանայ իր քրտնքի գնով ապրել: Օտարութիւնը՝ ուր դիմում էին գիւղացիք աշխատելու, այժմ աւելի քան վտանգաւոր է, շնորհիւ Թուրք-հայկական կռիւների: Միւս կողմից էլ դժբախտութիւնների ժամանակ վաշխառուների թիւը անսովոր կերպով աճում է, հացը օր օրի վրա թանգանում է. բայց մեր գիւղերից շատերը լիքն են ցորենի ամբարներով, որոնց տէրերը ժամանակին ժողովել են չնչին գներով երկրի բերքը և այժմ ամենայն զգուշութեամբ ծածկում են ժողովրդից՝ որպէսզի ապագայում 5 րուբլով վաճառեն: Ցաւը այն չէ, որ դրանք, այդ ժողովրդի մարմնին կպած տզրուկները, որոնք իրանց ուժը ստացել են նոյն ժողովրդից և դիմում են այս դաժանութեամբ լի ժամանակում այդ ստոր միջոցներին, այլ այն, որ այդ բարբարոսների թւում քիչ չեն նաև «ինտելիգենտ» մարդիկ, որոնք իրանց կեղտոտ դէմքերը ծածկում են բարեգործութեան դիմակի տակ:

Կայ և մի աւելի մեծ ցաւ. պարբերական կռիւները, որոնք միշտ լարված դրութեան մէջ են պահում հայ գիւղացուն. նա չը գիտէ իր կեանքը, գոյքը, ընտանիքի պատիւը պաշտպանէ Թուրքի յարձակումներից, թէ հացի դարդը քաշէ. լարած իր ուժերը՝ հայ գիւղացին սպասում է այդ տանջանքների տակ յուսալով որ մի օր վերջ կը լինի դրան և հայ ու Թուրք կը հաշտվեն, և ո՜վ գիտէ, գուցէ վաղուց դադարած լինէր կռիւը Թուրքի և հայի մէջ, եթէ չը լինէր մի զօրեղ պրովոկատոր ձեռք, որ ամենայն խնամքով առաջ է տանում այդ եղբայրասպան կռիւը:

Այժմ էլ մի ուրիշ ցաւ է աւելացել առանց այն էլ ցաւագար հայ գիւղացու շլինքին. ռմբակոծութիւնը և խուզարկութիւնը: Գեներալ Գօլօշչապօվի մեր գաւառ գալովը յոյս ունէինք փոքր ինչ թեթևութիւն զգալ, մեր հալալ աշխատանքի ետևից ընկնել. հաշտութեան աւետիքն էր բերում գեներալը, անաչառ խոստումներով էր մեր գաւառը ոտք կոխում. հետևանքը եղաւ այն, որ հայերը մեղաւոր են ամեն բանում, և իբրև դրանց մեղքի արդար հատուցում, այժմ ռմբակոծվում և խուզարկվում են հայկական գիւղերը, որից քիչ վնաս չէ կրում գիւղացին, որովհետև խուզարկութիւնների ժամանակ ամենակարող կօզակները չեն վարանում վերցնել ոսկեղէն, արծաթեղէն իրեր, նաև փող: Մեր գաւառի «Սարով» գիւղը ենթարկվեց խուզարկութեան հետևեալ պայմաններում. գիւղը շրջապատում են 500-ից աւելի կօզակներ և սկսում խուզարկել. գտնում են մի քանի պիստօնի հրացաններ, բայց միևնոյն ժամանակ կորչում է մի կնոջ արծաթէ գօտին, իսկ մի պարոն էլ տեսնելով, որ իր տունը խուզարկող կօզակներից մէկը վերցնում է սնդուկի միջից երկու հարիւր րուբլի փողը, խնդրում է ձեռքից և առնում փողը. կօզակը ընդդիմանում է տալուն. մի 25 րուբլիանոց թղթադրամ պատռւում է և անպէտքանում. ծեծում են նաև շատ մարդկանց, և վերջացնելով խուզարկութիւնը՝ մեկնում գիւղից: Կօզակների հեռանալուց չանցած տասն րոպէ, դաշտից հաւաք են կանչում թէ Թուրքերը ուզում են Նախիրը քշել. գիւղից երկու երիտասարդ վազում են կօզակների ետևից և խնդրում, որ օգնեն իրանց ու հաւաքին մի քանի կօզակներ գան և ազատեն նախիրը, բայց նրանք ուշ չեն դարձնում մեր երիտասարդներին և դրանց թախանձանքի հետևանքը լինում է այն, որ կօզակներից մէկը սրով խփում է տղաներից մէկի գլխին, որը մի քանի ժամից յետոյ մեռնում է ստացած վէրքից: Եղելութեան մասին յայտնում են իշխանութեանը. հետևանքը դեռ ևս անյայտ է:

Սամսոն Իսրայէլեան

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԱՆՈՒԱՆԱԿԱՆ ՀՐՈՎԱՐՏԱԿ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՍԵՆԱՏԻՆ

Վաւերացնելով, Մեր հրամանի համաձայն, ներքին գործերի մինիստրի կազմած և առանձին խորհրդի մէջ քննված Կովկասեան երկրի նահանգների ու վիճակների մէջ Պետական Դումայի ընտրութիւնների և նրանց լրացուցիչ կանոնների գործադրութեան եղանակը, հրամայում ենք յայտարարել սոյն կանոնները ընդունված կարգով:

Միևնոյն ժամանակ Մենք հարկաւոր համարեցինք լիազօրութիւն տալ Կովկասեան Մեր Փոխարքային. 1) Որոշել Պետական Դումայի ընտրութիւնները սկսելու համար կարգադրութիւն անելու ժամանակը իր կառավարութեան յանձնված երկրի զանազան մասերում, երբ որ տեղական հանգամանքները արգելք չեն լինիլ դրան, և 2) Գանձակի և Երևանի նահանգներում, Պետական Դումայի համար առաջին ընտրութիւնները կատարելիս, հարկաւոր դէպքում, միացնել գիւղերը, գաղութները և ընտրողական բաժանմունքներ կազմել: Նմանապէս բաժանել նահանգական ընտրողական ժողովները առանձին բաժանմունքների և որոշել նրանց իւրաքանչիւրից Դումայի համար ընտրելի անդամների թիւը, համաձայն ամբողջ նահանգի համար նշանակված անդամների ընդհանուր քանակութեան:

Իսկականի վրա Նորին Կայսերական Մեծութիւնը անձամբ ստորագրել է «ՆԻԿՕԼԱՅ»:

Ցարսկոյէ-Սելօ
1906 թ. փետրվ. 2

ՄԱՄՈՒԼ

Հաագայի իրաւարար ատեանի առաջ, Միացեալ-Նահանգների նախագահ Ռուզվելտի միջամտութիւնը ի նպաստ Թիւրքահայ դատին, զբաղեցնում է արտասահմանի ամբողջ հայութիւնը: Արտասահմանի հայ թերթերը շարունակում են այդ հարցին նուիրել յօդուածներ ու առաջնորդողներ: Ֆիլիպէում հրատարակվող «Ռազմիկ»-ը հետևեալ հետաքրքիր գաղափարն է թելադրում.

«Մինչև հիմայ թէ Ամերիկայի և թէ Եւրոպայի մէջ հայկական խնդրին համար կազմուած բոլոր այլ և այլ միթինկներուն, քոնֆերանսներուն և ժողովներուն քուէարկած օրակարգերը, անոնց մասնակցող անձերուն թիւովը մէկտեղ մատուցանել նախագահ Ռուզվելտին»:

Իսկապէս որ դա մի հետաքրքիր դօկումենտ կը լինի «պ. Ռուզվելտի ձեռնարկին աւելի զօրեղ ազդուութիւն մը տալու տեսակէտով և հայկական խնդրին կարևորութիւնը անգամ մըն ալ իր վայելած տիեզերական համակրութեանը մէջ շրջանակելու համար», ինչպէս դիտել տալիս է իրաւացի կերպով նոյն թերթը: Եւ յետոյ այդ ձեռնարկութեան նպատակը այլ տեսակէտից շահեկան է.

Այդ աշխատութեան ամփոփումը—շարունակում է «Ռազմիկ»—երևան պիտի բերէ թէ քանի քանի անգամներ եւրոպական ու ամերիկեան ժողովուրդները կոչ ըրած են Մեծ Պետութեանց՝ գործադրելու դաշնագրերով և հանդիսաւոր խոստումներով իրենց ստանձնած պարտականութիւնը:

Այդ բողոքներու տօքիւմաններուն դասակարգութիւնը ցոյց պիտի տայ, թէ մատի վրայ համրուող քանի մը մարդասէր ու գաղափարապաշտ անձնաւորութիւններ չեն միայն որ հայկական հարցով կը հետաքրքրուին, անոր արդարութիւնը կը հռչակեն և լուծումը կը խնդրեն. այլ պիտի յայտնուի թէ՝ բոլոր ազգերու բոլոր դասակարգերն ալ, սկսեալ բարեխիղճ դիւանագէտէն մինչև յետին գործաւորը, հայկական դատին անմիջական լուծումը կը պահանջեն. հետևաբար պետութիւնները իրենց ժողովուրդներուն հանրային մտածութեան համաձայն գործած և որ աւելին է՝ անոր գոհացում տուած պիտի ըլլան՝ իրենց յանձնառութիւնը գործադրութեան դնելով:

Վերջապէս, եթէ եւրոպական կարծիք, եւրոպական միթինկներ, քօնֆերանսներ, հանրային բողոքներ արժէք մը ունին ու գործնական նպատակի մը կը ծառայեն երբէք՝ ասկէ լաւագոյն առիթ չի կրնար ներկայանալ:

Բայց ինչպէս իրագործել այդ աշխատանքը. ո՞վ կարող է գլուխ բերել այդ օգտակար գործը, որը ունի իր որոշ դժուարութիւնները: Ֆիլիպէի թերթը դրան էլ պատասխան է տալիս.

Գործը ինքնին մեծ աշխատութիւն կամ ճիգ չի պահանջեր, այլ գործը լրացնող պայմաններն են որ ծանծաղ, տարածուն ըլլալով՝ մէկէ աւելի լրացուցիչ գործակցութեան պէտքը զգալի կը դարձնեն:

Ուստի, կը տեսնենք թէ այս մասին ամենէն նպաստաւոր ու բազմակողմանի յարմարութիւնը՝ Եւրոպայի Հայ-Ուսանողական Միութիւնն է որ կը ներկայանայ: Հայ-Ուս. Միութիւնը կրնայ աշխատութեան ծրագիր մը պատրաստել և գործի ձեռնարկել, այնպէս որ, միաժամանակ ամեն տեղ, Եւրոպայի այլևայլ երկիրներուն մէջ՝ անիկա իր մասնաճիւղ կոմիտէներուն միջոցով դասակարգուած, մեթոտաւոր գործ մը պատրաստած և ամենէն աւելի քիչ ժամանակի մէջ աւարտած պիտի ըլլայ: Հայ-Ուսանողութենէն դուրս՝ ո և է մարմին շատ աւելի դժուարութիւններ, շատ աւելի ժամանակ ու նիւթական զոհողութիւններ պիտի ունենար, աս երկրէն ան երկիր, աս քաղաքէն ան քաղաքը մարդ պտտցնելով:

Տարակոյս չունինք թէ Եւրոպայի Հայ Ուս. Միութեան օգտակար գործերէն մէկը պիտի ըլլայ ասիկա, որուն համար ամէնքս շնորհակալ և գոհ պիտի ըլլանք:

Կը մնայ Եւրոպայէն դուրս՝ Ամերիկայի մէջ պատրաստուելիք նոյն աշխատութեան յարակից մասը, որը բաղդատաբար այնքան հեշտ է, նկատի ունենալով հոն ալ ամեն կողմ գտնուող արդէն գիտակից գործիչներու և կազմակերպութեանց գոյութիւնը:

Երբ երկու կողմէն ձեռնարկը սկսի ու աւարտի, ետքէն դիւրին է զանոնք միացնել և ամբողջութեան մը վերածել վերջ՝ զայն պատշաճ ու գործնական ճամբով մատուցանել իր հասցէին:

Մենք «Ռազմիկ»-ի միտքը գտնում ենք անպայման արժանի համակրութեան և գովեստի: Մի տառապող, նահատակ ժողովրդի կեանքի մէջ մի քիչ հանգստութիւն, մի քիչ խաղաղութիւն և բարեկեցում մտցնելու համար չը պէտք է խնայել աշխատանք: Մենք «Ռազմիկ»-ի միտքը կը կամենայինք լրացնել, խորհուրդ տալով այդ գործին ձեռնարկողներին, որ նրանք, եթէ կարելի է հաւաքին մի գրքում, կամ այլ և այլ հատորներում, ոչ միայն մինչև այժմ Թուրքահայ դատին ի նպաստ տեղի ունեցած ցոյցերի արտայայտութիւնները, այլ և բաց անեն մի ընդարձակ հանրագրութիւն, ժողովելով բոլոր քաղաքակիրթ երկրներում Թիւրքահայ ժողովրդի տառապանքին կարեկցող և միջամտութեան հարկն անհրաժեշտ դատող բոլոր քաղաքացիների, երկու սեռից, ստորագրութիւնները: Դա կը լինէր մի հսկայական հանրագրութիւն, որ կը մատուցանէր քաղաքակիրթ աշխարհը նախագահ Ռուզվելտին, նրան հրաւիրելով միջնորդել ի նպաստ Արդարութեան և Իրաւունքի: Այդ կերպով կարծում ենք Ռուզվելտի միջամտութիւնը և՛ աւելի հարկեցուցիչ կը դառնար, և նրա ձեռնարկի ուժը աւելի ճնշիչ, աւելի հզօր: Եւ, եթէ երբէք, հակառակ ամբողջ աշխարհի բուռն ցանկութեան, և հակառակ բիւրաւոր ստորագրութիւնների բարոյական ճնշման, պետութիւնները շարունակէին արդարութեան ձայնի առաջ խուլ ու համր մնալ, այդ յիշատակարանը կը կանգնէր իբրև մի կենդանի բողոք ուղղված քարասիրտ ու մերկանտիլ Եւրոպայի չորացած խղճի դէմ, իբրև մի կենդանի ու խօսուն արձան հայ Տառապանքի, և իբրև նշան դէպի մարտիրոս ժողովուրդը տածված համակրութեան...

*

Ուղիղ 10 տարի սրանից առաջ, երբ Թիւրքիայում սուլթանը կոտորածներ էր անում և թշուառ հայերի արիւնը հեղեղի նման էր հոսում, իր կրակոտ ու ոգելից ճառերով Լէպսիուսը դիմում էր գերմանացիներին հետևեալ խօսքերով.

«Եթէ ձեզ հաճելի է տեսնել մի երկիր, որ ամբողջապէս ընկած լինի վշտի ու դժբաղդութեան մէջ, դարձրէք ձեր հայեացքները դէպի Թիւրքա-Հայաստանը: Եթէ դուք կամենում էք պարզ գաղափար կազմել բռնութեան անսահմանութեան վրա, ուսումնասիրեցէք այդ միևնոյն հայերի կեանքը և վիճակը»:

Բայց եւրոպական բոլոր գրողները և դիպլոմատները, իրանց հեղինակութիւնների ու ճառերի մէջ, միայն ի նկատի են ունեցել Թիւրքիայի հայերին: Շեշտելով նրանց անտանելի վիճակը, նրանք մատնացոյց էին անում միայն այն բանի վրա, որ հայերի մի մասը քրիստոնեայ և կուլտուրական Ռուսաստանում անհամեմատ ազատ է ապրում: Բայց, դժբախտաբար, վերջին տարիներիս հալածանքները Կովկասում, եկեղեցական այժմ վերադարձված գոյքերի խլելը և վերջապէս, այնքան անմեղ կերպով թափված արիւնը, հարկադրել են ամբողջ Եւրոպային կասկածել հայերի բարեկեցութեան մասին նաև Ռուսաստանում: Բողոքի բուռն ոգով են ներշնչված գերմանական հռչակաւոր կին գրող Էլզա Ֆրայանի ճառերը, որ արտասանել է նա Բէրլինում 1905 թւի նոյեմբերի 5-ին, ընդդէմ Կովկասեան արիւնահեղ ջարդերի բոլոր սարսափների: Ահա թէ ինչ է ասում նա. «Հայերը մի նպատակ միայն ունեն. հնարաւորութիւն տալ՝ լուսաւորութեան և կուլտուրայի շողերին ներս թափանցելու այն երկրի բոլոր մութ անկիւնները, որտեղ այժմ թափվում է եղբայրական արիւնը, դաստիարակելու ազնիւ և մարդասէր անդամներ հասարակութեան համար, ներդաշնակութիւն ստեղծելու դժբախտ հայրենիքի բոլոր ազգութիւնների մէջ: Ահա ինչի վրա են հիմնված հայերի իղձերը և ահա թէ ինչու համար են նրանց այդքան խիստ կերպով պատժում»: Ապա, խօսելով հայերի դրութեան մասին Կովկասում, յիշեցնում է հայերի մատուցած հսկայական ծառայութիւնները ռուսաց կառավարութեան դեռ ևս Պետրոս Մեծի ժամանակներից, բայց այդ բոլորի փոխարէն վարձատրում են հալածանքներով, որը կատարելագործվեց հայ-Թուրքական ընդհարումներով: Եւ այն ազգը, որ մինչև այժմ ապրել էր խաղաղ և առաջադիմում էր միմիայն կուլտուրական ճանապարհով, ստիպված եղաւ եղբայրասպան, անմիտ կռուի մէջ մտնելու իր դարաւոր հարևանի հետ»:

*

Թէ հերկուլեսեան որպիսի անհեթեթութիւնների է հասնում այժմեան բիւրօկրատական կառավարութիւնը իր խստութիւնները և անգթութիւնները արդարացնելու համար, ցոյց է տալիս «Рус. Вѣд.» լրագրի հետևեալ յօդուածը.

«Կառավարութիւնը կարծէք թէ սկսում է հասկանալ, որ նա իր եռանդի մէջ չափ ու սահմանն անցաւ: Այդտեղից առաջ է գալիս նրա ձգտումը՝ նուազեցնել առանց դատարանի մարդկանց հրացանազարկ անելու ամենօրեայ դէպքերը, որոնք կատարվում են յանուն Ռուսաստանի խաղաղացման և ցանկութիւնը՝ ցոյց տալ Ռուսաստանին, որ հասարակութիւնը համակրում է այն եղանակին, որով Վիտտէ-Դուրնովօյի մինիստրութիւնը կեանքի մէջ է մտցնում հոկտ. 17-ի սկզբունքները: Որպէս թէ այդ համակրութեան է պարտաւոր կառավարութիւնը և ոչ պատժողական արշաւախմբերին «կարգի» վերականգնումը, որպէս թէ կառավարութեան կողմն էր հասարակութեան «խոհեմ մասը», որ հասկացաւ, թէ յեղափոխականները անմիտ կռիւ են մղում ոչ միայն կառավարութեան, այլ և կուլտուրայի դէմ և համոզվեց թէ աջողութիւն ձեռք բերելու համար յեղափոխութիւնը ոչ մի միջոց չը պէտք է խնայել: Եւ ահա—գրում է «Торг. Промыш.» լրագիրը, իբրև վարձատրութիւն հասարակութեան այդ տեսակ համակրութեան, շուտով զինւորական դրութիւնը պէտք է վերցվի և քաղաքական ազատութիւնները պէտք է իրագործվեն:

Դժուար թէ այդպիսի յայտնութիւնները և խոստումները, որոնք սաստիկ հակասում են փաստերին, կարողանան ուժ և իցէ բաւարարութիւն տալ: Կառավարութիւնը սխալվում է կարծելով, որ հասարակութիւնը նրա կողմն է: Կառավարութիւնը ունի ռուսաց հասարակութեան մէջ, իր առաջ, նոյնպիսի համերաշխ ընդդիմադրութիւն բացասական կողմից, ինչպիսին նրանք գտան հոկտեմբերի 17-ից առաջ»:

ՆԱՄԱԿ ՂԱՓԱՆԻՑ

Յունվարի 25-ին

«Մշակի» ընթերցողներին յայտնի է արդէն Ղափանի շրջանում հայ-Թուրքական ընդհարումների մասին: Յայտնի է ձեզ նոյնպէս, որ Մողէս գիւղը հիմնայատակ են արել և հայերից վիրաւորվել են 4 հոգի: Այդ հիւանդներին բժշկական օգնութիւն ցոյց տալու համար վերցրի ինձ վրա վստահութիւն և տեղական հայ զինւորների ուղեկցութեամբ ճանապարհվեցի պղնձահանքերից Արծւանիկ: Բոլոր վիրաւորների վէրքերը փաթաթելուց և բժշկական օգնութիւն ցոյց տալուց յետոյ, աւելորդ չենք համարում հաղորդել մեր ստացած տպաւորութիւնները և քաղած ստոյգ տեղեկութիւնները:

Ամբողջ մողէսեցիները ներկայումս ապաստանում են Արծւանիկ գիւղացիների տանը: Ինձ վրա սրտաճմլիկ և սիրտ յուզող տպաւորութիւն թողեց այդ գիւղացիների տեսքը: Ամբողջ գիւղը աւերել, այրել են: Գիւղացիների միայն չորս տուն է կարողացել ազատվել տան բոլոր իրեղէններով և անասուններով, իսկ մնացած 25 տունը կրակի և թալանի են մատնել և քշել են տարել բոլոր տաւարները: Գիւղացիներից սպանված է ծեր Օհանջանը, իսկ վիրաւորներն են՝ Մելքում Օհանջանեան, Ալէքսան Յովհաննէսեան, Մանուչար Գալստեան և Հայրապետ Օհանջանեան: Պղծել են գիւղի եկեղեցին և տարել են բոլոր եկեղեցական իրերը: Գիւղացիք կարողացել են դիմադրել մինչև ընտանիքների, կանանց, երեխաների տեղափոխելը և կանայք են հասել Արծւանիկ և օգնութեան կանչել: Արծւանիկեցիք եթէ շուտ օգնութեան գնացած լինէին, Թուրքերը ոչինչ չէին կարող անել և մողէսեցիք իրանց սրտաբուղխ շնորհակալութիւնն էին յայտնում Արծւանիկեցի հայ քաջ տղերանց, շուտ օգնութիւն հասցնելու համար:

Այդտեղի կռւում վիրաւորվում է արծւանիկեցի քաջ տղերանցից Սաշա Սահակեանը, որի վէրքը և ընդհանուր առողջութեան դրութիւնը շատ վտանգաւոր գտանք. բարեբաղդաբար գիւղացիների ցորենները գետնահորերում են եղել և աւերումից յետոյ գիւղացիները և արծւանիկեցիք կարողանում են գնալ և տեղափոխել Արծւանիկ: Գիւղացիներիս՝ անկողիններով, ամանեղէններով և կաթնատու ու լծկան կենդանիներով օգնութիւն ցոյց տալու գործում ուղղակի բարոյական պարտականութիւն է ընկնում Ղափանի հայ հարուստների վրա: Մենք ոչ մի բարոյական իրաւունք չունենք սպասել դրսից օգնութեան, աչքի առաջ ունենալով դրսեցիների անծայր թշուառութիւնը:

Մենք հաղորդել էինք, որ Թուրքերը իրանց ոյժերը կենտրոնացնում են Զէյվա գիւղի վրա և մտադիր են յարձակվել: Եւ ահաւոր անյայտութիւնը իրականութիւն դարձաւ: Ամսիս 17-ին զէյվեցիներից մէկը գնում է իր մարագները «խանագա» կոչված տեղը դարման, խոտ բերելու. յանկարծ հարևան Թուրքերը շրջապատում են այդ գիւղացուն, խլում են զէնքը և իրան էլ ծանր վիրաւորում: Այդ դէպքերից յետոյ, յունվարի 18-ին, օրը ցերեկով, մի ահագին վոհմակ գալիս են նոյն տեղի մարագները, Թօվլաները կրակ զցում, աւերում՝ այրում են գետի վրա չորս ջաղացները, քարուքանդ են անում, կոտրատում են ջրաղացի քարերը և քշում են բոլոր տաւարները:

Յունվարի 19-ին մի ստուար լեգէօն սկսում են իրանց վանդալական արշաւանքները՝ եկած Բարգուշատի, Հաքարու, Երախսի մօտ գտնվող գիւղացիներից Զէյվի վրա և սարսափելի կռիւը տևում է ամբողջ օրը: Շնորհիւ քաջ գիւղացիների և դաշնակցութեան հերոս մարտիկների շուտափոյթ օգնութեան, Թուրքերին յետ են մղում բաւականաչափ Թուրքեր սպանելով և վիրաւորելով: Հայերից վիրաւորվողներ և սպանվողներ չը կան: Յարձակման նախաձեռնողը եղել է այդ գիւղի սեփականատէր Իպրիմ բէկ Սուլթանովը (դուբաթլուեցի), իսկ հրամանատարը Իպրիմ բէկի որդին նախկին պրապորշչիկ Սամիրը և դուբաթլուեցի Խանլար բէգը, ինչպէս ասում են զէյվեցիները: Թուրքերը զինված են եղել մօսինի հրացաններով, իսկ շատերը առանց զէնքի՝ թալանելու նպատակով: Երկու-երեք օր Թուրքերը իրանց որջերը քաշվելուց յետոյ, ամսիս 23-ին կրկին յարձակւում են գործում, բայց կրկին յետ են նահանջում, տալով մի սպանված: Զէյվա, Մողէս, Աւղանիս, Եղաւարդ և Հագարակ գիւղերը ընկած են Բարգուշատ գետի աջ կողմում մի ուղղութեան վրա պղնձահանքերից հիւսիս արևելք, մօտաւորապէս 20 վերստ հեռաւորութեան վրա: Այդ գիւղերի շուրջը Թուրք գիւղեր են և այդ գիւղերը կազմում են Ղափանի գլխաւոր դարպասը և այդ է գլխաւորապէս Թուրքերի ծրագիրը, որ նախ՝ քշացնեն այդ գիւղերը և ապա շարունակեն իրանց ասպատակութիւնները Արծւանիկի, Սաւքարի, Չափնի, Սուլքինչափ գիւղերի վրայով դէպի պղնձահանքերի մօտ գտնվող գիւղերը, բուն Ղափանը: Բաղեցիկ, երևակայական ցնորքներ են, եթէ իրականութիւն դառնան: Երկրորդ դարպասն էլ կազմում են Մելիք-Ազարեանցի Սինիք գործարանը, Շիխաուղ և Ճակէն հայ գիւղերը, որ Թուրքերի յարձակման երկրորդ կէտն է ներկայանում հարաւից արշաւելով դէպի մեզ:

Թուրքերի տւած տեղեկութիւններից երևում է, որ Եղաւարդի և Մողէսի կռւում սպանվել են 25 Թուրք և անթիւ վիրաւորներ: Թուրքերի անաջողութիւնը տեսնելով, լսում ենք որ իբրև թէ մտադիր են Ջիբրայիլի և Շուշու գաւառից մարդիկ բերել և կրկին յարձակւում գործել: Եւ այսպէս Ղափանում, բոլորս ներկայ ծանր ժամանակում սպառողական դրութեան մէջ ենք: Գիւղից գիւղ դարձել է անանցանելի, երկիւղալի: Չը բռնկված տեղերում երկու տարրերի մէջ տիրում է սաստիկ անվստահութիւն. մի թեթև կայծ—հրդեհը պատրաստ է: Աւելի ահաւոր դրութիւն է սպասվում գարնանը, երբ Թուրքերը պէտք է բարձրանան սարերը և այժմեանից Ղափանի հորիզոնը մթադնում է և դառնում է մռայլ:

Մի քանի օր առաջ Թուրք բէկերը հրաւիրել էին տեղիս ազդեցիկ հայերին Ղարագոլ գիւղը հաշտութեան համար, իսկ հայերը հրաւիրեցին Մելիք-Ազարեանցի Սինիք գործարանը: Թուրքերը փոխանակ գալու և բանակցութիւններ անելու հաշտութեան համար, չը նայած որ մեր լողական գործարանները անզգայացել է հաշտութեան խօսքը լսելուց. յաջորդ օրը լուր են տալիս բէկերը, որ չեն կարողանում Թուրք խուժանի առաջն առնել և մտադիր են յարձակվել և այլ սոփեստութիւններ: Երէկ Արծւանիկ գիւղում մեզ ասացին, որ դուբաթլուեցի Խանլար բէկը, նախկին Բագուի հաշտարար դատաւորի քարտուղարը, մօտեցել է Զէյվի գիւղին ելնելով մի բարձունքի վրա և կանչել է իր մօտ մի քանի հայերի և հեռուից ասել է. «լսել եմ պատրաստվում էք գաղթելու և շատ վիրաւորներ ունէք. ի սէր Ալլահի չը գաղթէք, Իպրիմ բէկը չէր իմացել և բացակայ էր. նոր եկաւ և ցրեց Թուրքերին. մեզ մօտ կացէք. չը լինի գիւղից հեռանաք»: Տեսնում էք, ընթերցող, որպիսի պատրիարքական լեզու է բանեցնում Խանլար բէկը... Այդ խօսքերից կարելի է եզրակացնել, որ Թուրք մասսան մտադիր է աւելի ուժեղ կերպով յարձակւում գործել: Զէյվեցիք, ի հարկէ, իրանց տեղն են և երբէք մտադիր էլ չեն գաղթելու:

Մեր հարևան Թուրք տարրը երբ պէտք է հասկանայ, որ հայերը անհաշտ նախայարձակ չեն եղել, այլ յարել են միշտ ինքնապաշտպանութեան սկզբունքին: Այսպիսի աննորմալ կացութիւնը ստեղծելով, Թուրք ձրիակեր, պորտաբոյծ, Թուրք աղքատ ժողովրդի հաշւով ապրող բէկերը, իրանց նախաձեռնութեամբ սկսած այդ վայրագ գործի շնորհիւ աւելի քան կրիտիքական դրութեան մէջ են դրել Թուրք ժողովրդին, որի մեծամասնութիւնը, գոնէ հանքերի շրջանում, ցանկութիւն անգամ չունի մասնակցելու այդ անմիտ, ապեղ և հակամարդկային եղեռնագործութեան, որովհետև Ղափանի ժողովուրդը աղքատ է և ապրուստի միակ նեցուկը պղնձահանքերում աշխատելն է: Ժամանակ է, որ Թուրք ինտելիգենցիան, եթէ միայն գոյութիւն ունեն իրական կենտրոնում ազնիւ, անշահ և մարդասէր իդէալներով տոգորված երիտասարդներ, մտնեն գործեն Թուրք գիւղերը, Թուրք ժողովրդի մէջ, կենդանի խօսքով, հասարակ լեզւով հասկացնեն և այդպիսով երկու հարևան ազգերի մէջ տիրող անտագոնիզմը վերացնեն: Եթէ կան անկեղծ հասարակական շահերի նախանձախնդիր Թուրք ինտելլիգենտներ, թող դիմեն այն վայրերը, որտեղ լուսաւորութեան և կուլտուրայի հետքեր չը կան. միմիայն կենդանի խօսքը, անկեղծ սրտից, զգացմունքից բղխած խօսքը, քարոզը կարող է կանգնեցնել տալ և զսպել Թուրքերի բնազդները: Քաղաքներում միտինգներ, զանազան խորհրդակցութիւններ կազմելը իրականապէս և գրականապէս ոչ մի օգտաւէտ արդիւնք չէ տալիս, քանի որ այդ ժողովների արդիւնքները չեն թափանցում ժողովրդի խորքերը:

Հայ-Թուրքական լարված յարաբերութիւնների պատճառով պղնձահանքերի շուկան կենսական մթերքներ չէ տալիս և եթէ երկար շարունակվի, կարելի է ասել, որ սով է սպառնում լեռնային մասերում ապրող թէ Թուրքերին, թէ հայերին: Խանութները դատարկ, վաճառականները երկիւղի պատճառով տեղափոխել են ապրանքները իրանց գիւղերը և շատերը հեռանում են:

Մեղրի գիւղի մնալից մեր ստացած մասնաւոր նամակներից երևում է, որ առ այժմ կատարեալ հանգստութիւն է տիրում և յուզման նշաններ անգամ չեն նկատվում: Ցանկալի կը լինէր, որ Գիւնէր մահալի Թուրքերը իրանց չէզոք պահէին և շարունակէին նախկին բարեկամութիւնը, ինչպէս մինչև օրս գոյութիւն ունի:

Յ. Դ.

ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՄՕՏԻԿ ԱՆՑԵԱԼԻՑ

Պ. Ամիրխանեանցի «Բաց նամակը» ուղղած մահմեդական հոգևորականութեանը՝ յիշեցրեց ինձ մի քանի նմուշներ շիաների նախկին շէյխ-ուլ-իսլամ՝ այժմ հանգուցեալ Միրզա-Հասանի կեանքից նմուշներ, որոնք պարզ վկայում էին նրա բարձր արժանաւորութիւնները, նրա ժողովրդասիրութիւնը, լայն հասկացողութիւնը, առաքինի վարքը և վսեմ գաղափարը: Այս երջանկայիշատակ կրօնապետը իննսուներեք թէ չորս թւականներում շրջում էր Ջիւանշիր գաւառում, այցելում Թուրք գիւղերը, գիւղական դպրոցները, յորդորում ժողովրդին համերաշխ և սիրով դրացիութիւն անել հայերի հետ, չը խորշել նրանցից, այլ մօտենալ նրանց, սովորել և իւրացնել նրանց կեանքի պայմանները, նրանց գիւղատնտեսական պարապմունքները, սովորել արհեստներ, սիրել ուսում, գիտութիւններ, ձգտել ապրել հայերի նման հալալ աշխատանքով, այն հայերի՝ որոնք կուլտուրապէս աւելի են առաջադիմել: Նոյնը պատւիրում էր և պատահած հայերին: Սարով գիւղի մօտ պատահում է տեղական հայ քահանային և տանուտէրին, հրաւիրում է նրանց հետևել իրան դէպի հարևան Թուրք գիւղը, ուր քահանային նստեցնում է մօլլաների մօտ, իսկ տանուտէրին Թուրք համփաների շարքում ու սկսում քարոզել սէր և համերաշխութիւն երկու հարևան ցեղերի մէջ: Վերադառնալով իրանց գիւղը, հիացմունքով էին խօսում հայ քահանան և տանուտէրը պատկառելի և համակրելի մահմեդական հոգևորականի մասին, գովաբանում էին նրա խորիմաստ մտքերը, ազդու խօսքերը, ազնիւ և շիտակ մարդու յատկութիւնները և լայն աշխարհայեցողութիւնը:

Այցելելով Բարդա Թուրքաբնակ գիւղում երկդասեան դպրոցը և գտնելով աշակերտների թիւ անբաւարար և անհամեմատ քչութիւնը, այդ գաղափարական մարդը, լի զայրոյթով բացականչում է. «Միւսուլման եղբայրներ, այս ինչու է այսպէս. մտնում ես գիւղական դպրոցները—համարեա դատարկ, գիմնազիաները, գիտութեան և լուսաւորութեան այդ տաճարները, պատահում ես Թուրք աշակերտների շատ անմխիթար քանակութեամբ՝ այն էլ ստորին դասարաններում միայն, բարձր դասարաններում կամ չեն լինում, կամ շատ չնչին տոկոս: Բայց երբ մտնում ես բանտը՝ մեր աշխարհի այդ ջհանդամը, այնտեղ, սակաւ բացառութեամբ, հանդիպում ես Թուրքերի միայն: Ինչո՞վ բացատրել այս ցաւալի երևոյթը: Նրանով—կը պատասխանեմ ես, որ ով ձեզանից գողութիւն, սպանութիւն և աւազակութիւն է անում, դուք նրա հասցէին գովեստներ էք շռայլում, նրան ուղղակի «իգիթ» էք անւանում, սակայն իմացէք, որ այդպիսիները իգիթ չեն, այլ չար գազաններ, եղեռնագործներ, որոնց վերջին տեղը բանտն է և աքսորավայրերը: Իսկ իգիթը նա է, ով արհեստ է սովորում, ձեռնարկում է հալալ աշխատանքի և ապրում է իր ճակատի քրտինքով:»

Այս ցիտատը մենք բերում ենք մի ռուսական ամսաթերթից, որտեղ նա տպված էր իր ժամանակին: Որքա՜ն ահագին տարբերութիւն ներկայի և մօտիկ անցեալի մէջ, որքան սարսափելի և ծայրահեղ հակապատկեր է ներկայացնում ներկան մօտիկ անցեալին... Եթէ հոգևորականութիւնը բարձրացնէր իր հեղինակաւոր ձայնը, եթէ մօլլաները տխրահռչակ Սադղների, Իպրիմների, Մուսէիբների և Բահրամների հետ ձեռք ձեռքի տւած չառաջնորդէին խուժանին և խուլիգաններին, այժմ մեր հրաշալի Կովկասը, բանաստեղծական Կովկասը, չէր դառնայ սուգ ու շիվանի, վայնասունի վայր, չէր ողողվի նա անթիւ զոհերի անմեղ արիւնով... Վերջացնում եմ Թուրքական առածով. Վնասի կէսից դառնալը խելացութիւն է:

Նիկ. Գրիգորեանց

Ոսկանապատ

Ա. Վ. ԿՐԻՎԻՑԿԻ

(Նամակ Գանձակից)

8 փետրվարի

Գանձակի նահանգական դատարանի նախագահ Ալ. Վլադիմիրովիչ Կրիվիցկին, որ 25 երկար տարիներ վարել է նահանգական դատարանի նախագահութեան պաշտօնը, նշանակվել է Թիֆլիսի դատաստանական պալատի դեպարտամենտի նախագահ:

Ալ. Վ. Կրիվիցկին, իր երկարամեայ ծառայութեան ժամանակ, մշտական փայլել է իր անկողմնապահութեամբ, արդարադատութեամբ և որ ամենագլխաւորն է՝ նրանից հեռու է եղել ազգայնութեան խտրութեան մարդատեաց գաղափարը: Եւ այդ բացառիկ արժանաւորութիւնների շնորհիւ նա վայելել է ընդհանրապէս բոլորի և մասնաւորապէս մեր հայերի համակրութիւնը:

Նահանգական դատարանի բոլոր ծառայողների, ինչպէս նաև հայ հասարակութեան ներկայացուցիչների համար անհնար լինելով անցնել Թուրքաց Թաղը նախագահին վերջին հրաժեշտը մատուցանելու, նրանց խնդրիքով և հրաւէրով, Ալէքսանդր Վլադիմիրովիչը երէկ բարեհաճեց գալ ցերեկվայ ժամի 12-ին յաջորդարանի դահլիճը, ուր նրան սպասում էին ինչպէս ծառայող դասակարգը, նոյնպէս և հայ հասարակութեան ներկայացուցիչները:

Հայ ծառայողների կողմից նախագահին մատուցվեց մի արծաթէ ալբոմ և մի ուղերձ, որը կարդաց ծառայողների կողմից Անդրէաս-բէկ Սերեբրակեան: Ուղերձի համար պ. Կրիվիցկին շատ զգացված յայտնեց իր շնորհակալութիւնը, աւելացնելով, որ ինքն, իբրև ծառայող, իր մարդկային պարտականութիւններից դուրս ոչ մի աչքի ընկնող բան չէ կատարել:

Երբ պ. Կրիվիցկին իր խօսքը վերջացրեց, դահլիճը մտաւ փոխանորդ Կորիւն վարդապետն և ծանօթանալուց յետոյ հետևեալ ճառն ասեց.

«Ձերդ գերազանցութիւն. շատ ցաւում եմ, որ հանգամանքների բերմունքով առաջին անգամ եմ ծանօթանում ձեզ հետ, և առաւելապէս ցաւում եմ ձեր հեռանալու համար, տեսնելով այն խորին վիշտը, որ զգում է Գանձակի հայ հասարակութիւնը, ծառայող դասակարգը և ինտելիգենցիան:

«Ձեր համակրելի անձնաւորութիւնը, մաքուր գործունէութիւնը և անշեղ համոզմունքը, որ քսան տարվայ ընթացքում դուք ցոյց էք տուել Գանձակում ծառայած ժամանակ, երկա՜ր շատ երկա՜ր տարիներ յիշել կը տան ձեզ մեր հասարակութեան շրջանում: Դուք, իբրև նահանգական դատարանի նախագահ, հետևել էք միայն և միայն ճշմարտութեան, հեռու մնալով ազգայնական և կրօնական հայեցակէտից և տարբերութիւնից, և ձեր այդ մաքուր գործունէութիւնը և անշեղ ընթացքը կապել են ձեզ հետ մի ամբողջ համայնքի սէրն ու համակրանքը, որ այսօր իր ներկայացուցիչների բերանով արտայայտում է ձեզ իր համակրական զգացմունքները:

«Ձերդ գերազանցութիւն. ծառայութեան լայն և բարձր ասպարէզը, ուր հրաւիրված էք գործելու, ստիպում է ձեզ թողնել ձեր սիրած Գանձակը: Գնացէք, Աստուած ձեզ հետ, դուք կը հեռանաք, բայց ձեր մաքուր, անարատ անունը և յիշատակը միշտ թարմ և անմոռաց կը մնան Գանձակի անբաղդացած հայ հասարակութեան սրտում:

«Թող Տէրը օգնէ ձեզ, ձեր նոր ասպարիզում»:

Նախագահը զգացված յայտնեց իր շնորհակալիքը:

Ծառայող-աստիճանաւոր Անդրէաս Սերեբրակեանը ասաց մօտաւորապէս հետևեալը:

«Ձերդ գերազանցութիւն. մատուցանում եմ ծառայողների կողմից այս չնչին նուէրը, որը շատ չնչին է, համեմատած մեր զգացումների հետ: Մեր զգացմունքները դէպի ձեզ մեծ են և անսահման, զգացումներ, որոնց արտայայտելը լեզւով մեր ուժից շատ վեր է: Միայն այսքանը կարող եմ ասել, որ դուք երկարամեայ ծառայութեան ժամանակ մեզ հետ եղել էք թէ պահանջող, կարգապահ իշխանաւոր և թէ գթառատ հայր: Դուք եղել էք շատ խստապահանջ, բայց արդարադատ, դուք էք եղել մեզ նման թշուառների նեցուկը, նեցուկ մեզ նման անբաղդների տատանվող բաղդի:

Ներկայումս զրկվելով այդ միակ նեցուկից, մանաւանդ ներկայ թշուառ պարագաներում, մեզ բոլորիս համար զգալի և միանգամայն անփոխարինելի կորուստ է և շատ ցաւ է պատճառում մեր սրտին: Մի և նոյն ժամանակ մենք չենք կարողանայ մեր տխրութեան հետ միասին ծածկել մեր բերկրանքը, որ իշխանութիւնը, գնահատելով ձեր երկարամեայ անբիծ, անարատ պաշտօնավարութիւնը, ձեզ հրաւիրում է աւելի բարձր պաշտօնի»:

Նախագահը յայտնելով ճառախօսին իր շնորհակալութիւնը, աւելացրեց, որ այստեղից ևս առիթներ կը լինեն յաճախակի իրար տեսնելու, ասելով, որ շատ յաճախ լինելու է Գանձակում պաշտօնական գործերով:

Հասարակութեան կողմից խօսեց երդուեալ հաւատարմատար Աբրահամ Թէմուրեանը: Նա ասաց հետևեալը.

«Բարձրապատիւ Ալ. Վլադիմիրովի՛չ!

Գանձակի հայ հասարակութիւնը խնդրեց ինձ ձեր հրաժեշտի բոպէին մի քանի խօսք ասելու: Ձերդ գերազանցութեան փոխադրվելու լուրը մեզ թէ ուրախութիւն և թէ տխրութիւն պատճառեց: Տխրութիւն պատճառեց այն, որ մեր անբաղդ Գանձակը զրկվում է ձեզնից, իսկ ուրախութիւն պատճառեց այն, որ դուք արժանացել էք ձեզ արժանի բարձր պաշտօնին: Ձեր 20 տարվայ անարատ և անշեղ մարդասէր ծառայութիւնը, իբրև իշխանաւոր մի հիմնարկութեան, ամուր և անքակտելի կապերով կապեց ձեզ ազգաբնակութեան հետ:

Հայերի հալածանքի պատմական տարիներում, երբ տեղական բոլոր վարչութիւններում հայերին հալածում էին, երբ հայատեացութիւնը հսկայական քայլերով էր ընթանում Գանձակում, և ամեն հիմնարկութիւններից արտաքսում էին ոչ մի յանցանք չունեցող հային, այդ սոսկալի վայրկեանին միայն ձեր իշխանութեան ներքոյ գտնվող հաստատութեան մէջ ծառայողները ազատ մնացին այդ հալածանքներից: Աւելին ասեմ. ուրիշ հիմնարկութիւններից հալածվածը ապաստան է գտել ձեզ հաւատացած հիմնարկութիւններում:

Եւ ահա ինչու հայ ազգաբնակութեան համար դժուար է բաժանվել մի մարդուց, որի ամբողջ գործունէութիւնը հիմնված է արդարադատութեան և ամենաբարձր ճշմարտութեան վրա»:

Նախագահը պատասխանեց հետևեալը:

«Դուք այնպէս խօսեցիք, որ ինձ թւում է թէ ձեր նկարագրութիւնը չափազանցութեան հասցրիք: Ես ոչինչ չեմ արել, բացի իմ մարդկային պարտականութիւնից: Յիրաւի, ես հեռանում եմ, բայց իրար հետ տեսնվելու առիթներ շատ կունենանք»:

Ապա բժ. Գերասիմ Մէլիք-Բէգլարեանը և Սերեբրակեանը խնդրեցին յարգելի հիւրին այս շաբաթվայ մէջ մի օր իրանց հետ միասին ճաշելու: Այս առաջարկութեանը ձայնակցեցին ներկայ եղողները: Սակայն նախագահը շատ յարգելի պատճառներից ստիպված՝ քաղաքավարի հրաժարվեց այդ առաջարկութիւնից:

Մենք ևս մեր կողմից բարի ճանապարհ մաղթելով յարգելի նախագահին, անկեղծ սրտից ցանկանում ենք ծերունուն ողջերթ և առողջութիւն:

Ա. Սահակեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թէոդոսիա, 25 յունվարի

Հասարակական Բողոք Եւ վճիռ

1906 թ. 25 յունվարի, ի ներքոյ ստորին ստորագրող ծխականներս Թէոդոսիայի հայոց եկեղեցիների, որ կազմում ենք «հարիւր» տասն ծխաբաժին, այսօր հայոց դպրոցում կազմելով ընդհանուր ծխական ժողով, նախագահութեամբ պ. Յ. Թերզեանի, վճռեցինք ի լուր հայ աշխարհի յայտնի կացուցանելու հասարակութեանս անհուն վիշտ պատճառող պարսաւելի գործերը այս կարգով:

Ա. Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի Տ. Թեմակալ Առաջնորդի № 313 անցեալ 1905 թ. դեկտեմբերի 8-ի արձակած առաջադրութիւնը, որով նա դադարեցրած է համարել մեր ծխատէր Ներսէս քահանային՝ համարելով վերջինիս որպէս թելադրող իր ազգական մի երիտասարդի՝ երէցփոխ Ն. Սուրաշեանին ծեծելու, որպէս թէ ծխին հաշիւ չը տալու խնդրի պատճառով, վկայում ենք, որ երիտասարդի ընդհարումը երէցփոխ Ն. Սուրաշեանի հետ ունի անձնական բնաւորութիւն և չունի ոչ մի կապ ծխականներիս հաշիւ չը ներկայացնելու խնդրի հետ, հետևապէս՝ առաջադրութիւնը նենգադրութիւն և մի վճիռ, որ զուրկ է կանոնաւոր և բարեխիղճ քննութիւնից. մենք բողոքում ենք այդ վճռի դէմ և վերականգնելով ծխատիրոջ պատիւը՝ այսօրվանից իսկ տալիս ենք բողոք ս. Էջմիածնի Սինօդին վերաքննելու Առաջնորդի վճիռը:

Բ. Նոյն Թեմական առաջնորդի նոյն թիւ առաջադրութեան այն կէտը, որով դարձեալ մեղաւոր է ճանաչվել ծխատէր քահանան, որպէս մեղսակից Սիմֆերոպոլի արդէն յայտնի Կոպչեկճեան աւագ քահանային վիրաւորելու գործում, դա ակնյայտնի զրպարտութիւն է՝ և առաջնորդ եպիսկոպոսի նենգադրութեան վճիռ. բողոքում ենք այդ զրպարտութեան դէմ,

Գ. Երէցփոխ Ն. Սուրաշեանին, որը իր յամառ բնաւորութեամբ առ ոչինչ համարեց ծխականներիս պահանջը ծխին հաշիւ տալու, այն դէպքում, երբ ծխի ներկայացուցիչները, հաշւատեսները բարձր թողի էին արել իրանց բարոյական պարտքը՝ և Թէոդոսիայի հայ ժողովրդի հինաւուրց եկեղեցիները ս. Սարգիս և ս. Գէորգ արդէն քայքայման և անբարեզարդ վիճակին էին մատնվել և նոյնպէս էլ դպրոցը և երէցփոխ Սուրաշեանը ոչ միայն ուշադրութիւն չէր դարձնում քայքայման առաջն առնելու, այլ նոյն իսկ հակառակվեց ծխականներիս հաշիւ տալու իր մօտի գումարի համար պատճառաբանելով, որ ինքը պարտական է տարվայ վերջին հաշիւ տալու ծխին—ճանաչել Սուրաշեանին անարժան ծխիս յարգանքը վայելող անձ և այսօրվանից տալ վերջնական բողոք հեռացնելու Սուրաշեանին երէցփոխի պաշտօնից:

Դ. Քաղաքիս հայ բուրժուազիա դասակարգը, որի համար մեր ծխատէր Ներսէս քահանան հաճելի չէ իր պահանջող և շիտակ բնաւորութեամբ՝ և այդ «աղաներն» են, որ դիմում են ամեն «յայտնի» և «գաղտնի» միջոցների հեռացնելու Տէր-Ներսէսին. այսօրվանից բաժանվում ենք այդ «աղա» դասակարգից, կազմելով առանձին ծխաբաժին, բաժանելով չորս եկեղեցիները հաւասարապէս իրանց կայքերով:

Ե. Որովհետև Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի հայոց Թեմակալ առաջնորդ Խուդավերդեան Ներսէս, յունվարի 17-ին Տաւրիկեան պ. նահանգապետի միջոցով ուզում էր հեռացնել քաղաքիցս մեր ծխատէր Ներսէս քահանային՝ համարելով վերջինին, որպէս մեր հասարակական հանգստութիւնը վրդովողի, (յունվարի 17) մենք այսու բողոքում ենք, որ դա զրպարտութիւն է: Եւ որպէս թէ ծխատէր Ներսէս քահանան հակառակվել է Վեհափառի հրամանին ս. Էջմիածին գնալու, դա ևս զրպարտութիւն է, որովհետև երբ հեռագիր ստացվեց որ Ներսէս քահանան գնայ Էջմիածին, նա, Հ. Հէրթեցեան № 1 յայտարարութեամբ խնդրեց առաջնորդից «удостовереній» Կովկաս մտնելու և ապա երթևեկութեան և թէ ճանապարհածախքի հրամանը գրված է ամսիս 16-ին և նա հասաւ տեղս ամսիս 20-ին. բայց ինչի՞ց գրված և ինչ հիման վրա առաջնորդը ամսիս 17-ին պ. նահանգապետից հեռագրով խնդրում է, որ իբրև Ներսէս քահանան ժողովրդին հանգստութիւնը խանգարող է և ս. Էջմիածին չը գնացող, հակառակ բարձր իշխանութեան հրամանի, ուստի նրան (Հէրթեցեանին) ոստիկանութեամբ ուղարկել Էջմիածին. այս մեզ զարմանք և մեծ ցաւ պատճառեց իր թէ խորթութեան և թէ անխղճութեան տեսակէտից, նամանաւանդ, որ Հ. Հէրթեցեան ամսիս 15-ից՝ բացակայում էր Թէոդոսիայից:

Զ. Տարախչեան Մկրտիչ ուսուցչին համարել բոլորովին արձակված իր թէ անընդունակութեան կողմից, որ նա փոխանակ դաստիարակելու մատաղ ուսանողներին, ընդհակառակը փչացրել է նրանց «ծեծելով» և թէ հասարակութեանս մէջ բռնվեց որպէս խօսք տանող բերող:

(95 ստորագրութիւններ)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Вечерн. Гол.» լրագիրը հաղորդում է, որ մտադրութիւն կայ գեներալ Տրէպովին ուղարկել Կովկաս 2 կամ 3 ամսով, եթէ այդ բանը կը պահանջեն հանգամանքները, գլուխ կանգնած պատժող արշաւախմբի: Նրա փունկցիաները և լիազօրութիւնները՝ կատարելապէս համեմատ կը լինեն Պրիբալտեան նահանգներն ուղարկված գեներալ Օրլովի պարտաւորութիւններին և իրաւունքներին:

—

Փետրվարի 10-ին, օրը ցերեկով, քաղաքումս կատարվել է դարձեալ մի ոճրագործութիւն, որին զոհ է գնացել Դվորցովայա փողոցի վրա, վրաց ազնուականութեան պատկանող քարվանսարայի մէջ, կազմարարի արհեստանոցի և գալանտերէյնի ապրանքների խանութատէր 2-րդ կարգի վաճառական Յ. Յակոբեանը: Այդ դժբաղդ օրը ծերունի Յակոբեանը ժամի 2¼-ին, ցերեկով գնում է տուն ճաշելու, մի քանի քայլ պակաս իր բնակարանից, որը գտնվում է քաղաքիս 5-րդ մասում, Պօլիցէյսկի փողոցում, անյայտ անձինք պարպում են ծերունու վրա երկու անգամ ատրճանակ, որից թշուառը գետին է գլորվում՝ ծանր վէրք ստանալով կրծքից: Ատրճանակի ձայնից դուրս են թափվում տունից կենողները, որոնց մէջ և Յակոբեանի դուստրը, որը տեսնելով իր վիրաւոր հօրը՝ լաց ու կոծով օգնութիւն է կանչում: Տարաբաղդաբար մինչև վիրաւորվածին հասցնում են կառքով Միքայէլեան հիւանդանոցը, ճանապարհին թշուառը վախճանվում է: Թէ ինչ շարժառիթներից է կատարվել այդ քստմնելի ոճրագործութիւնը—երևի կը պարզէ քննութիւնը. այսքանը միայն յայտնի է, որ մի քանի ամիս առաջ կազմարարութեան արհեստանոցի մի ծառայողի և հանգուցեալի որդու մէջ գործավարութեան վերաբերութեամբ մի տարաձայնութիւն է ծագում, որը սուր կերպարանք ստանալով՝ վերջ ի վերջոյ պատճառ է դառնում ծառայողի մերժվելուն պաշտօնից: Հանգուցեալը վերջին երեք ամսվայ ընթացքում անանուն սպառնական նամակներ է ստանում, ուստի և նախազգուշութիւն ձեռք առնելով՝ գիշերները խանութը փակելուց յետոյ միշտ տուն էր գնում մարդկանց ուղեկցութեամբ, իսկ սպանութեան օրը ցերեկ լինելով և չկասկածելով, որ իր գլխին փորձանք է գալու—գնում է տուն միայնակ: Արդեօք անձնական վրէժխնդրութեան զոհ է հանգուցեալը, թէ ուրիշ շարժառիթներ կան այս գործում—թողնում ենք լուսաբանելու ապագայի քննութեան, միայն մի հանգամանք այստեղ չենք կարող անտես առնել և լռութեամբ անցնել: Վերջին անգամները մեր վաճառական դասակարգից սպանութեան են մատնվել շատերը. ոմանք՝ գործադուլներին չը մասնակցելու համար, ոմանք՝ գործակատարների հետ գժտութիւններ և թիւրիմացութիւններ ունենալու համար, ոմանք՝ դրամական պահանջներ չկատարելու համար: Մի՞թէ այլ ճանապարհներով՝ ընկերական, միջնորդական, դասակարգային, հասարակական և այլն դատաստանով չէ կարելի թիւրիմացութիւնները՝ առանց արիւն թափելու, քննութեան առնել և լուծումն տալ:

—

Փետրվարի 13-ին առաւ. մօտ 11 ժամին երդուեալ հաւատարմատար Գէյդեմանը պետական բանկից 15,000 ռուբ. փող իր բնակարանը տանելիս (Մուկովսկի փող. տուն Օզօշինինի) լեզգի թիկնապահ Գուլալօվի ուղեկցութեամբ, մօտենալով իր բնակարանին, թողնելով թիկնապահին ֆաէտոնի մէջ, ինքը իջաւ և մօտեցաւ դռանը զանգահարելու նպատակով. այդ վայրկեանին 4 զինված անյայտ չարագործներ, յարձակվեցին ֆաէտոնի մէջ նստած թիկնապահի վրա և, բերդան հրացանով վիրաւորելով վերջինին, խլեցին նրանից բոլոր 15,000 ռուբլին և անյայտացան:

—

Անցեալ տարի մարտի 25—31-ին Աթէնքում կայացաւ հնագիտութեան առաջին միջազգային կոնգրէսը (Congres International d'Archéologie), Յունաստանի գահաժառանգ իշխան և Սպարտայի դուքս Կոնստանտինի նախագահութեամբ: Այս օրերս մենք ստացանք այդ կոնգրէսի պաշտօնական տեղեկագիրը, որ պարունակում է նրա ակտերը և ցոյց է տալիս, որ կոնգրէսին մասնակցել են 865 գիտնականներ և պատուիրակներ, որոնց թւում և Մասպէրօ: Կոնգրէսը ընտրել է 14 անձանց անդամ-թղթակից (membre correspondant) զանազան երկիրներից, իրանց ներկայացրած յիշատակագրերի համար: Այդ 14 անձանց թւում գտնվում է և պ. Հ. Առաքելեան, որ ներկայացրել է մի յիշատակագիր Հայաստանի հին մայրաքաղաք Անիի աւերակների մասին, տալով այդ քաղաքի պատմութեան և դեռ կանգուն մնացած կոթողների համառօտ նկարագրութիւնը»:

—

Ստացանք Բագւից, բժիշկ Մ. Արտէմեանից հինգ ռուբլի՝ յանձնելու Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան՝ գործադրելու մի բոլորովին որբ աղջիկ երեխայի համար, համաձայն նոյն վարչութեան «Մշակի» № 22-ում զետեղած կոչի: Բժիշկ Մ. Արտէմեանը յայտնում է, որ երբ Բարեգործական ընկերութեան վարչութիւնը կը գտնէ այդպիսի մի երեխայ և կը յայտնէ նրան այդ որբի անունը, ազգանունը, նա կուղարկէ անմիջապէս մի ամբողջ տարվայ նպաստը այդ որբի համար ամսական 5 ռուբլի, ուրեմն մնացած 55 ռուբլին: Հինգ ռուբլին մենք յանձնեցինք Բարեգ. ընկ. վարչութեան:

—

Փետրվարի 10-ին, գիշերվայ ժամի 8-ին, քաղաքիս 9-դ մասի Մոստովայա փողոցի վրա հետևեալ դէպքն է պատահում. մի քանի կօզակներ մտնում են մանրավաճառ Շահպարոնեանցի խանութը. մէկը ծխախոտ է պահանջում, իսկ միւսը աշկարայ, խանութպանի աչքի առաջ մի քանի կտոր զանազան ապրանքներ է վերցնում և դուրս գնում: Խանութատէրը միջամտում է գործին և մօտակայ ստորին ոստիկանին պատմելով յափշտակութեան դէպքը՝ խնդրում է օգնութիւն, սակայն վերջինս լակոնական պատասխան տալով «какое мнѣ дѣло»—չէզոք է մնում. այնուհետև ինքը խանութպանը, որը նոր աւարտած լինելով զինւորական ծառայութիւնը՝ մի փոքր զինւորական կարգերի հետ ծանօթ է—անձամբ խլում է կօզակի ձեռքից յափշտակած ապրանքը, բայց այդ ժամանակ շրջապատում են նրան կօզակները հանած թրերով, մի անցնող սպայ էլ, որին կօզակները հաւատացնում են, որ իբր նրանց վրա յարձակումն է գործել մանրավաճառը, ձեռաց մի կարգադրութիւն է անում վերջինիս ձերբակալել և ոստիկանատուն տանելու և յետոյ նստելով էլեկտրաքարշ հեռանում է: Այդ աղմուկի ժամանակ, բարեբաղդաբար, վրա են հասնում պահակազինւորները (պատրուլ) և մի կերպ անվտանգ ազատում են մանրավաճառին կօզակների ճանկերից: Ինչպէս լսում ենք, պ. Շահպարոնեանցը մտադիր է եղելութիւնը գրաւոր հաղորդել ուր հարկն է:

—

Ռուսաստանում տեղի ունեցած կոտորածներից և ջարդերից կեանքի ապահովագրութեան ընկերութիւնները մեծամեծ վնասների են ենթարկվել. այդ կողմից ամերիկական «Էկվիտեբլ» ընկերութիւնը չը դիմանալով վնասներին՝ արդէն մայրաքաղաքի լրագիրների ասելով, դադարեցրել է իր գործունէութիւնը:

—

Պետերբուրգի նահանգում սկսվում է լուրջ գիւղացիական շարժում: (Вѣкъ)

—

«Веч. Гол.» լրագիրը հաղորդում է հետևեալ տեղեկութիւնը. «Զինւորական խորհրդում, լէյբգվարդեան Սեմյոնովսկի գնդի հրամանատար Մինի մասնակցութեամբ, լուրերի համեմատ, դրական մտքով է վճռված Ֆինլանդիա զօրքեր ուղարկելու հարցը: Ֆինլանդիայում յամառութեամբ լուր է պտտում, որ շուտով հրաժարական է տալու Գէրարդը: Այդ լուրը կապում են Ֆինլանդիա նշանաւոր զօրքեր ուղարկելու հետ: Բոլորովին հակառակ տեղեկութիւն է տալիս «Бирж. Вѣд.» լրագիրը: Նրա տեղեկութեան համեմատ, մի քանի ժամանակ առաջ վճռված էր մի քանի զօրագնդեր ուղարկել Ֆինլանդիա, սակայն վերջին օրերս փոփոխութիւն տեղի ունեցաւ կառավարչական բարձր շրջանների հայեացքների մէջ այդ հարցի վերաբերմամբ և ներկայումս այդ հարցը վերջնականապէս ջուրն ընկաւ, և վճռվեց շարունակել սպառողական, բայց խաղաղասէր քաղաքականութիւնը:

—

Մինիստրների խորհրդի վերջին նիստում կոմս Վիտտէն և նրա հետ խորհրդի մի քանի անդամներ դիմեցին ներքին գործերի մինիստր Դուրնովօին առաջարկելով նրան սահմանափակել նահանգապետների կամայականութիւնը: Դուրնովօ այդ բանին պատասխանեց, որ այն ժամանակ ինքն ևս ստիպված կը լինի հրաժարական տալ: Այդ յայտարարութիւնը ընդհանուր լռութեամբ ընդունվեց:

—

Հրաժարական տուեց ներքին գործերի մինիստրի օգնական իշխան Ուրուսօվ:

—

«Новости» լրագիրը հաղորդում է, որ կոմս Վիտտէն յայտնեց մինիստրների խորհրդի վերջին նիստերից մէկի մէջ, որ մինիստրները լաւ չեն նախապատրաստվում Պետական Դումայի համար, որ մինչև Դումայի գումարումը հազիւ երկու ամիս է մնացել և որ բոլոր մինիստրները պարտաւոր են առաջուց համաձայնութիւն կայացնել իրար մէջ: Այն մինիստրները, որոնք համաձայն չեն իր քաղաքականութեան հետ, կարող են վերադարձնել մինիստրական պորտֆէյլները:

—

«Вечерн. Газета» լրագիրը հաղորդում է, որ ընդհարումը կոմս Վիտտէի և Դուրնովօի միջև հարթված է: Դուրնովօի կողմից արված են մի քանի զիջումներ: Այդ զիջումներից մէկն էլ այն է, որ սրանից յետոյ ներքին գործերի մինիստրութիւնը ոչ մի նշանաւոր քայլ չէ կարող անել, մինչև որ համաձայնութիւն չը կայացնէ մինիստրների խորհրդի նախագահի հետ: Բայցի դրանից բոլոր պատգամաւորութիւնները և ուղերձները սրանից յետոյ կանցնեն կոմս Վիտտէի ձեռքով: Կուտլերի հրաժարականը բացատրվում է բիւրոկրատական շրջաններում որպէս զիջում զինւորական կուսակցութեան:

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստր կոմս Տօլստոյ շատ դժգոհ է վերջին ամիսների [illegible] և զգալով իր անյարմար դրութիւնը Դուրնովօի կաբինետում, վճռել է հրաժարական տալ, եթէ սահմանադրական կառավարութիւնը չը սկսէ իրագործել հոկտեմբերի 17-ի մանիֆեստը ուրիշ միջոցներով, քան հրացանազարկութիւններով և զինւորական կամայականութեամբ:

—

Գեներալ Օրլովից Պրիբալտեան երկրից մանրամասն զեկուցումն է ստացված նրա գործունէութեան մասին, ապստամբութիւնը խաղաղացնելու վերաբերմամբ: Թէպէտ երկիրը խաղաղված է, բայց, գեներալի համոզմունքով, այդ տեղից զօրքեր դուրս բերելը ներկայումս չափազանց վտանգաւոր է: Նրա կարծիքով, զօրքերը պէտք է մնան մինչև մայիսի վերջը, որովհետև մայիսին հնար կարող են բարդութիւններ առաջանալ բանուորների տօնի պատճառով: Որպէս հաղորդում է գեներալը, այս տարի մայիսի 1-ի տօնին խոստացել են իբր թէ պատւիրակներ գալ արտասահմանից: Ընդամենը, մինչև զեկուցում ուղարկելու օրը, նա մահվան պատժի է ենթարկվել 259 մարդու:

—

Յունվարի 30-ից մինչև փետրվարի 6-ը Թիֆլիսում նկատվում են տարափոխիկ հիւանդութիւններ. հիւանդացել են կարմրուկով 6 հոգի, շառաչիքով—3, դիֆթերիտով—8, բկացաւով—3 և թոքախտով—2 հոգի:

—

Փետրվարի 12-ին խուզարկեցին Միրաքեանի

պատասէ խանութը Միջին փողոցում, բայց ոչինչ չը գտան:

—

Քաղաքիս բաղնիսների կեանքը սկսել է արդէն հետզհետէ կանոնաւորվել, թէկէտև յաճախորդները գնում են լողանալու փոքր ինչ կասկածանքներով: Եւ այդ կասկածանքների պատճառն այն է, որ մինչդեռ քաղաքումս յայտարարված է զինւորական դրութիւն և իշխանութիւնները այս ու այն կողմ խուզարկում և զէնքեր են խլում, 8-րդ քաղաքամասում, մահմեդականների թաղում, նոյն իսկ ցերեկով երևում են հատ հատ թուրքեր հրացանը բաց արձակ շալակած գնալիս: Մեր հաւաքած տեղեկութիւններից պարզվում է, որ գիշերները մահմեդական սրիկաներ զինված ազատ ման են գալիս նոյն թաղում և յաճախ կօզակների աչքի առաջ, նրանց հետ եղբայրութիւններ սարքում: Այդ պատճառով, օրինակ, Միրզօևի բաղնիսում, ծառայողներից, քիսաչիներից մի քանիսը երեկոյից չեն աշխատում. բաղնիսի կապալառուն սպառնում է թուրքերով փոխարինել հայերին: Մենք շատ լաւ ըմբռնում ենք կապիտալիստի հոգեբանութիւնը. նրա միակ հոգսն է շահեցնել իր փողը թէկուզ մեծ զոհերով. օրինակ, այժմ նոյն Միրզօևի բաղնիսում տասը քիսաչի ծառայողների փոխարէն կայ հինգը, որոնք իրանց ընտանիքի ապրուստի սիրուն, ամեն րօպէ սպառնացող վտանգի տակ ստիպված աշխատում են. ի հարկէ ծառայողների թիւ կրճատումով ծառայութիւնը ուշանում է և տուժողները լինում են և յաճախորդները և ծառայողները, որոնց աշխատանքը կրկնապատկված է: Արդ, տարրական արդարութիւնը պահանջում էր, որ գոնէ այդ ծանրաբեռնված ծառայողների ռոճիկը աւելանար: Բայց դժբաղդաբար այդպէս չէ. նրանք մահվան երկիւղով աշխատում են և նախկին վարձադրով: Կապալառուն այն աստիճան խնայողութիւնների ետևից է, որ նոյնիսկ լրագիրները, այն էլ հայ լրագիրները բոյկոտի են ենթարկված իր հաստատութեան կողմից. չը կայ ոչ մի հայերէն լրագիր, սպասել ստիպված յաճախորդներին զբաղեցնելու համար, ինչպէս առաջ: Եւ սակայն Միրզօևի բաղնիսը թուրք-հայկական ընդհարման ժամանակ վնասվել է, ճիշտ է, տարել են խալիչաներ, ժամացոյց և այլ, ընդամենը 5—600 րուբլու արժողութեամբ, բայց բարեբաղդաբար վնասը համեմատաբար փոքր է. ինչ պիտի անէր կապալառուն, եթէ բաղնիսի արժէքաւոր մարմարները ջարդ ու փշուր արված լինէին:

—

Թիֆլիսից հեռագրում են «Ռուս» լրագրին, որ իբրև այստեղի «Հայրենասիրաց ընկերութիւնը» շուտով հրատարակելու է «Գոլօս Կավկազա» անունով մի օրագիր՝ որը նուիրված պիտի լինի երկրի ռուսական շահերին ծառայելու: Բացի այդ, նոյն աղբիւրից հաղորդված է, որ Թիֆլիսում մի յատուկ ուսումնարան է բացվում զինւորական ծառայութեան համար պատրաստելու նպատակով:

—

Մայրաքաղաքի լրագիրների ասելով՝ շուտով հրատարակվելու է սենատոր Կուզմինսկու աշխատութիւնը առանձին գրքոյկով «Բագուն և նրա նահանգը—տնտեսական, սօցիալական, վարչական և քաղաքական տեսակէտներից: Այդ հետազօտութիւնը սենատորական քննութիւնների փաստերի վրա պիտի լինի հիմնված:

—

Ներկայումս տպվում է կայսրութեան հիմնական օրէնքի նախագիծը: Այդ նախագծի մէջ մտցված են թէ նոր ինքնուրոյն և թէ ուրիշ նախագծերից վերցրած յօդուածներ: Նախագիծը պէտք է լոյս տեսնէ Պետական Դումայի նիստից առաջ և կառաջադրվի Դումային, սակայն Պետական Դուման որպէս օրէնսդիր, բայց ոչ սահմանադիր (учредительный) հիմնարկութիւն—իրաւունք չըպիտի ունենայ վերաքննելու այդ օրինագիծը:

—

Մի քանի անգամ յամառ լուրեր հրատարակվեցին լրագիրներում, որ իբր նոր ներքին 4-դ փոխառութեան խաղարկութեան տոմսեր պիտի բաց թողնէ պետութիւնը 200 միլիօն գումարի: Այս լուրի հիման վրա՝ 1, 2 և 3 խաղարկութեան տոմսակների գները բորսայի վրա սկսան իջնել, բայց՝ մայրաքաղաքից եկած վերջին տեղեկութիւններից երևում է, որ նոր փոխառութեան տոմսեր բաց թողնելու մտադրութիւն չը կայ, այլ փոխառութեան համար Պետերբուրգի պետական բանկի կառավարչի օգնականը ուղարկվում է Պարիզ փոխառութիւնը կնքելու այնտեղի բանկիրների մօտ:

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Հրաման Թիֆլիսի ոստիկանապետից. «Ես նկատել եմ, որ գլխաւոր փողոցների վրա, և մանաւանդ Գոլովինսկի պրոսպեկտի Դվորցովայա և Սոլոլակսկի փող.ները էլեկտրաքարշի կայարանների վրա Վերայի գաւիվայրի անկիւնում, Օլգինսկի փող. անկ. և Միխայլեան պրոսպեկտի և Երևանեան հրապարակի վրա երևացել են շատ աղքատներ, որոնք անց ու դարձ անողներից ողորմութիւն են խնդրում: Այդ պատճառով առաջարկում եմ պ. պ. պրիստավներին հրամայել գորոդովոյներին, որ նրանք աղքատներին թոյլ չը տան փողոցներում ողորմութիւն խնդրելու և պատահած աղքատներին ձերբակալել և եթէ դրանք լինեն օտար-քաղաքացիներ, թող ներկայացնեն ինձ, էտապով հայրենիք ուղարկելու համար, իսկ տեղացիներին ենթարկել դատի:

—

Փետրվարի 10-ին Մէչնիկովի փողոցի վրա գտնվող թուրքահպատակ Յարութիւն Աբրահամեանի փուռը, երբ հաց գնելու նպատակով, մտան 4 տեղացիներ, որոնցից մէկը սպիտակ չերքեզկա ունէր հագած, իսկ երեքը վերարկուներով էին և ատրճանակով ու սրով սպառնալով, Աբրահամեանից պահանջեցին զէնք, երբ վերջինս յայտնեց, որ նա ոչ մի զէնք չունի, նրանք, երբ խուզարկելու նպատակով, կոտրեցին դրամարկղի կողպէքը և գողացան նրա մէջ գտնվող 400 րուբլի փող և 2 արծաթէ ժամացոյց. Նրանից յետոյ սպառնալով, որ եթէ Աբրահամեանը նրանց կը հետամտի, կը սպանեն, չարագործները անյայտացան:

—

Ելիսավետինսկի փողոցի վրա բնակվող Կատարինէ Սուլխանեանը յայտնեց 9-րդ քաղաքամասի ոստիկանատանը որ նրա ծառայ (Քութայիսի բնակիչ) Ամբաքօ Ջոխաձէն փետրվարի 11-ին գողացաւ նրա կամօդից 310 րուբ. փող, և անյայտացաւ:

—

Իսահակ Ն. Փուլինեանը, որը բնակվում է Վանքի փողոցի վրա, սեփ. տանը, փետրվարի 11-ին յայտնեց 3-րդ քաղաքամասի ոստիկանատանը, որ նոյն օրը նրա բնակարանից գողացված է զանազան ոսկեղէն 500 րուբլու արժողութեամբ: Գողութեան մէջ կասկածվում են Թելաւեցի Նիկոլայ Գվինեռվը և իր հարևան Ալեքսեյ Գ. Մայսուրաձէն, որոնք անյայտացել են:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Թէհրան, (յունվարի 27-ին) Պարսկաստանում վերջին ամիսներս, համարեա ամբողջ ազգաբնակութեան մէջ, սպառնալի խլրտումներ են տեղի ունենում, որոնք ստեղծված են արհեստական ճանապարհով: Այդ խլրտումները Անգլիան ստեղծել է ոչ թէ փրկելու Պարսկաստանին ստրկութեան շղթաներից, այլ բացառապէս իր դեռ ևս անսասան հակառակորդի Ռուսաստանի ազդեցութիւնը ոչնչացնելու նպատակով: Այն ժամանակ, երբ մեր դիպլօմատիան լեթարգիական քնով էր քնել, իսկ ռուսաց թերթերը փողհարում էին ռուսական «խոշոր» յաջողութիւնների մասին (քառասուն միլիօն ծախսելուց յետոյ), անգլիացիները նախ պաշտօնանկ արեցին նախկին պրէմիէրին, որը մեր դաշնակիցն էր համարվում, իսկ յետոյ էլ շարժում ստեղծեցին մեր մաքսային դաշնագրի դէմ: Այդ նպատակին հասնելու համար նրանք նախ և առաջ սկսեցին լուրեր տարածել ազգաբնակութեան մէջ, որ Նօսը և միւս բէլգիացիները ռուսաց նշանակած մարդիկ են: Այդ պայքարին, անգլիական փողերով կաշառվածներից բացի, հարեցին նոյնպէս առաջնակարգ կուսակցութեան համոզված պարագլուխները, երկու մուշտէիդները Աղա Սէիդ Մուխամմէդ և Աղա Շէյխ Ֆազուլլա, որոնք, արդարութիւն պահանջում է ասել, անգլիական ոսկու հետ ոչ մի առնչութիւն չունեն: Անգլիացիների ինտրիգաները այն տեղը հասցրին, որ ամբոխը սէիդների առաջնորդութեամբ (Մահմէդ մարգարէի սերունդների) քար ու քանդ արեց ռուսական բանկի նոր շէնքը, փաստօրէն հեռացրեց գործից Նաուսին, որին կառավարութիւնը ստիպված եղաւ ուղարկելու Կ. Պօլիս իբրև թէ Բ. Դրան հետ «բանակցելու» համար և ապա սկսեց յետ մղել ռուսական շաքարը Պարսկաստանի շուկաներից: Դրա համար արհեստական կերպով բարձրացրին շաքարի գները, երբ բանկի ջանքերի շնորհիւ, գները ընկաւ, սկսեցին անմիտ լուրեր տարածել մարդիկ թունաւորվում են: Պարսկաստանի զանազան գաւառներից հեռագիրներ ուղարկվեցին Թէհրան, որ իբրև թէ ռուսական շաքարից ժողովուրդը թունաւորվում է: Յունվար ամսի 20-ի մօտերը Թէհրանում տանում էին մի դագաղ որի վրա կախել էին ռուսական երկու գլուխ շաքար: Ամբոխը գնալով աւելի էր բազմանում: Դագաղը տանողներից մէկը անիծում էր ռուսներին վաճառած շաքարի համար: Վերջապէս երբ այդ թափորը արդէն չափազանց մեծ ցոյցի բնաւորութիւն ստացաւ, մի ոստիկան գերեզմանատանից ոչ հեռու ստիպեց դագաղը ցած դնել քննութեան համար: Երբ դագաղի վրայի ծածկոցը վերցրին, տեսան նրա մէջ մութաքաներ, փաթաթած սաւանում, իսկ շաքարի թղթերի մէջ միմիայն աւազ և ցեխ:

Այնուամենայնիւ ժողովուրդը դարձեալ չէ առնում ռուսական շաքարը:

Անցեալ ամսում Թէհրանի նահանգապետի հրամանով, մի քանի շաքարի միջնորդներին ծեծի ենթարկեցին նրա համար, որ դրանք արհեստական կերպով բարձրացնում էին շաքարի գները: Վաճառականների տրված այդ պատիժն էր պատճառը, որ բոլոր վաճառականները երկու օր գործադուլ արեցին, իսկ հակակառավարչական կուսակցութիւնը հեռացաւ Թէհրանից, ինչպէս մի մարդ և, մուշտէիդների առաջնորդութեամբ, գնաց Շահ-Աբդուլ-Ազիմի մզկիթը, որտեղ թաղված է Ալիի թոռներից մէկը:

Ահագին բազմութեան հեռանալը քաղաքից մուշտէիդների առաջնորդութեամբ և դիմադրողական կերպով շահի կառավարութեանը բոլորովին շփոթեցրեց, որը աւելի ևս աւելացաւ, երբ ժողովուրդը սկսեց պահանջել վերադարձնելու մուշտէիդներին բաւարարութիւն տալով նրանց պահանջներին: Խանութպանների և արհեստաւորների գործադուլը շարունակվում էր: Երկու օր շարունակ շրջում էին քաղաքում զօրքերը և պահակները: Պալատի շուրջը երկկարգ շարքերով շղթայ կապած կանգնած էին զօրքերը: Երրորդ օրը Շահը չը կարողացաւ այլևս զսպել իրան և ճանապարհվեց Ջաջրուդ որս անելու պատրուակով, որը տևեց ամբողջ երեք շաբաթ:

Մինչդեռ անգլիացիների գործակալները շաբաթեկան մի անգամ փող էին տանում Շահ-Աբդուլ-Ազիմ գործադուլ անողների համար: Նոյնպէս նրանց աջակցելով անգլիացիները հնարաւորութիւն չէին տալիս կառավարութեանը դիմելու սովորական կաշառքին կուսակցութեան անդամների մէջ ջլատում և պառակտում առաջացնելու նպատակով: Նա մի քանի անգամ դիմեց կուսակցութեանը և առաջարկեց քաղաք վերադառնալ, խոստանալով, բոլոր պահանջներին բաւարարութիւն տալու: Վերջապէս, Շահը ուղարկեց նրանց պարագլուխների մօտ պալատի մինիստր Էմիր-Բահադուր-Ջէնկին: Վերջինիս մուշտէյիդների հետ տեսակցելու հետևանքը այն եղաւ, որ կուսակցութիւնը համաձայնվեց ուղարկել իր ներկայացուցիչներին մեծ վէզիրի մօտ իրանց պահանջները յայտնելու համար, որոնցից ամենակարևորները հետևեալն է. հիմնել դատաստանական հաստատութիւններ, պաշտօնից հեռացնել Նօսին և պարսկական բոլոր բէլգիացի պաշտօնեաներին, որպէս «ռուսների նշանակածներ»: Կուսակցութեան պարագլուխների Աթաբէկ-Ազամի հետ ունեցած տեսակցութեան հետևանքը եղաւ շահի հետևեալ երկու ֆիրմանը.

Շահական «դաստագը» մուշտէիդների անունով:

(Ոճի օրիգինալ լինելու պատճառով թարգմանութիւնը համարեա բառացի է եղել)

«Պարոններ, շարիաթի քաջ պահապաններ, մեծ գիտուններ, թող Ալլահը ձեզ առողջութիւն պարգևէ:

Պարոններ Աղա-Միրզա-Մուստաֆա, Աղա-Միրզա-Մօհսուն, Աղա-Միրզա-Աբուլգասըմ և Էդիմամզադէ-Իսմամ ուղարկված էին ձեր կողմից Աթաբէկ-Ազամի մօտ ձեր ցանկութիւնները յայտնելու համար: Մենք մանրամասն կերպով տեղեկացանք դրա մասին: Բոլոր ընտրեալ գիտունները պէտք է իմանան, որ մեր անխոնջ գթութիւնը և մարդասիրութիւնը միշտ եղել է բարիք ժողովրդի համար, իսկ նամանաւանդ գիտունների համար, որոնք բարի զգացմունքներ են տածում դէպի մեր գահը և անկեղծ կերպով աղօթում պետութեան յարատևութեան համար: Միշտ վերաբերվելով դէպի ձեզ խորին հաւատով և գթառատ սիրով, մենք ձեր դարաւոր իրաւունքները ընդունելու գործում միշտ ջերմ ուշադրութիւն ենք ցոյց տուել: Հէնց այժմ, մեծ Աթաբէկի ամենահպատակօրէն ինձ տուած զեկուցման ժամանակ ձեր ցանկացածների մասին, մենք շնորհեցինք հետևեալ «դաստխատը» (հրովարտակը), որ կուղարկեն ձեզ: Լիայոյս եմ, որ դուք քաղաք կը վերադառնաք և կարժանանաք Աթաբէկ-Ազամի կողմից ընդունելութեան:

Մենք ողորմածաբար արտայայտում ենք մեր լաւ կարծիքը և բարեհաճ վերաբերմունքը դէպի ձեզ: Թող ձեր աղօթքների շնորհիւ պետութեան ույժը և աջողութիւնը շատանան:

Շնորհված է այս հրովարտակը Զիլ-Քաատէ ամսում, 1323 թւի Հիջրի:»

Շահի «Դաստխատը» Աթաբէկ-ազամի զեկուցագրի վրա:

«Մեղնով մեծարեալ պարոն և մեծ Աթաբէգ: Մենք քանիցս անգամ յայտնել էինք, որ դատաստանական հաստատութիւններ հիմնելը, շարիաթի վէհ և մարդասէր պատուիրանները կեանքի մէջ գործադրելու նպատակով, ժողովրդի բարւաւորութիւնը և խաղաղութիւնը աւելի կարևոր է և անյետաձգելի, քան բոլոր մեր միւս բարի նպատակները: Իսկ այժմ կտրական կերպով հրամայում ենք, մեր սուրբ ցանկութիւնը կատարած լինելու և որոշելու համար մեր ամեն մի հպատակի իրաւունքները, անյապաղ հիմնել մեր փառաւոր Իրանի բոլոր քաղաքներում դատաստանական հաստատութիւններ Իսլամի մարդասէր ոգու համաձայն: Դրա համար հարկաւոր է մշակել օրէնքներ Իսլամի մաքուր պատուիրանների ոգով. որպէս զի հաւասարութիւն տիրապետէ մեր հպատակների մէջ և նրանց գանգատները քննվեն օրէնքի համաձայն: Ապօրինութիւնները և անարդարութիւնները խստիւ պէտք է արգելվեն: Վսեմ շարիաթի ոգով կազմված օրէնքները նախ քան հրատարակելը մեզ պէտք է ներկայացնել: Հաստատում ենք, որ Իրանի ընտրեալ գիտունների այդչափ բարի ցանկութիւնները կը սաստկացնեն մեր ողորմած վերաբերմունքը դէպի իրանց: Այս դաստհատը հարկաւոր է յայտարարել Իրանի բոլոր քաղաքներում և աւաններում: Շնորհված է Զիլ-Քաատում 1323 Հիջրի»: Այդ դաստհատներից յետոյ ամբողջ կուսակցութիւնը վերադարձաւ քաղաք, ուր նրան ժողովուրդը դէմօնստրատիվ ու շքեղ ընդունելութիւն ցոյց տուաւ: Երեկոյեան վաճառականները հրավառութիւն սարքեցին և հրափամփուշտներ արձակեցին: Ոստիկանութիւնը չէր արգելում:

Դաստհատները դեռ ևս չեն յայտարարված թերթերում, որոնցից մէկը («Էդաբ») տպագրելու փորձ անելու համար նոյն իսկ դադարեցրին:

Վերջին ժամանակներս երկրի հարաւային մասերում անգլիացիները խոշոր խլրտումներ են կազմակերպում, ի հարկէ, միջամտութիւն առաջ բերելու նպատակով և այդպիսով իրագործելու իրանց վաղուցվայ փափագը՝ Պարսկաստանի հարաւի յափշտակելու համար Շիրազից անհանգստացնող լուրեր են գալիս:

Ճանապարհորդութիւնից վերադարձաւ շահի եղբայր Զիլլի սուլթանը, որին շահը յետ կանչեց Պարիզից, որտեղ նա անգլիական դեսպանի հետ ունեցած իր յաճախակի այցելութիւններով վերջնականապէս վարկաբեկ արեց իրան:

«Кавказъ»

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Մէշէդ, յունվարի 19-ին

Պարսկական «Հաբլ-օլ-Մաթին» լրագիրը հայ-թուրքական ընդհարումների շուրջը

Մենք անտարբեր կը մնայինք դէպի այն ամեն վիրաւորանքներն ու սուտ զրպարտութիւնները, որոնք ուղղված կը լինէին մեր դէմ «Հայաթ»-ի խմբագրողների կողմից, բայց տեսնել թէ ինչպէս, պարսկական ամենաառաջնակարգ և ազատամիտ համարվող թերթերից մէկը—«Հաբլ-օլ-Մաթին»-ը ընթանում է Աղաևների գծած շաւղով, թարգման հանդիսանալով նրանց գաղափարներին, և սառնասիրտ մնալ, այդ աւելի քան անկարող ենք և, կարծում ենք, որ յանցաւոր գտնված չենք լինի, եթէ ընթերցողի ուշադրութիւնը հրաւիրենք այդ լրագրի №11-րդ համարում լոյս տեսած երկու թղթակցութիւնների վրա, որոնք առաջ ենք բերում թարգմանաբար:

I

Բագուի դէպքերը

(Խմբագրական յօդված)

Մեր ստացած նախկին թղթակցութիւններում նկարագրված սարսափները առ ոչինչ են համարվում այսօրվայ պօստով «ստացված—Հայաթ» լրագրի № 54, 55 և 56 համարներում նկարագրածի մօտ: Այդ լրագիրը բերում է մեզ, հայերի—այդ անհանգիստ տարրի—նորանոր չարագործութիւնների լուրը. այդ նոյն հայերը, որոնք պարսիկ կառավարութեան ցոյց են տալիս, թէ որչափ պաշտպան են պարսկական շահերի, ի տրիտուր այդ կառավարութիւնից վայելած բարիքների, չեն զլանում այնտեղ՝ Կովկասում, ամենախայտառակ մահով սպանելու մեր հարազատ 300 պարսկահպատակ եղբայրներին, չխնայելով անմեղ մարդկանց, կանանց և անմեղ մանկանց:

Մուսուլմանները անտեղեակ իրանց դէմ նիւթվող դաւերին, նկատի չունենալով, որ երբ և իցէ յարձակման կենթարկվեն հայերի կողմից, 12 օր շարունակ նահատակվում էին Կովկասի զանազան քաղաքներում, հոսում էր մեր եղբայրների արիւնը, թալանվում նրանց ինչքը, հրդեհի մատնվում նրանց տները....:

Ո՞վ ասես ծանօթ չէ, որ այդ ազգը (հայ) տոգորված սեպարատիստ գաղափարներով, աշխատում էր վերացնել այն խոչընդոտները, որոնք արգելում էին նրան իրագործել իր այդ գաղափարները. և, դժբախտաբար, այդ հարուածը ուղղվեց մեր դէմ, մենք, որ եղանք առաջին զոհերը: Մենք, որ բարեկամական յարաբերութիւններ էինք պահպանում նրանց հետ, ջարդվեցինք, կոտորվեցինք նրա համար միայն, որ կարող էինք լոյս աշխարհ հանել նրանց այդ սեպարատիստ գաղափարները. բայց ռուս կառավարութիւնը հասկացաւ վերջապէս, որ բոլոր յանցանքները հայերինն է:

Այդ ազգը, մի կողմից աղ ու հաց է ներկայացնում պարսից Շահին, ցոյց տալու համար թէ ինքը որչափ երախտագիտական զգացմունքներ է տածում դէպի կառավարութիւնը, մինչդեռ միւս կողմից, նա յարձակվում է օտար երկրում գտնված մեր եղբայրների վրա, հրի և սրի բաժին դարձնելով նրանց և նրանց ունեցածը:

Մեր սրտի մորմոքը (սոխթանը դէլ) հէնց այնտեղից է առաջանում, որ մեր այդ թշնամիները Պարսկաստանում գտնվում են բոլոր կառավարչական ծառայութիւնների մէջ, դրանցից մի քանիսը, որոնք էնզելի են գտնվում, ֆէդայիներն են (?) և ինչ ասել կուզի, որ աշխատում են խռովութիւններ յարուցանել իրանց գտնված շրջանում. սակայն ինչպէս լսվում է, էնզելի քաղաքի ազգաբնակութիւնը և յայտնի վաճառականները ժողով գումարելով և 100 թուման տուգանք նշանակելով ստորագրութիւնը չը յարգող անձնաւորութիւնների վրա, մի խնդրագիր են պատրաստում, Սադրազամի միջոցով Շահին ներկայացնելու, որի մէջ մի առ մի յիշված է հայերի բռնած դիրքը, նրանց տածած թշնամական յարաբերութիւնները դէպի պարսիկ ազգաբնակութիւնը և միակ ելքը այդ դրութիւնից դուրս գալու համար այն են համարում, որ դուրս վռնդվեն կառավարչական հաստատութիւններից—պօստ-մաքսատնից և հեռագրատներից—բոլոր հայ պաշտօնեաները, և որպէս սահմանաքաղաքի, նոյնպէս ազգաբնակութեան կեանքի և գոյքի ապահովութեան համար, խնդրվում է նշանակել ձիաւոր զինւորներ, որպէս զի, Աստուած մի արասցէ, մի վտանգ պատահելիս իրանք անպաշտպան չը մնան (sic):

Հայերն էլ իրանց կողմից աղ ու հաց են ներկայացնում, արկանելով առ ոտս Նորին Վեհափառութիւն Մուզաֆֆարէդդին Շահնշահի իրանց հաւատարիմ հպատակութեան զգացմունքները. սակայն Շահը սառն է ընդունել նրանց և նրանք ամօթահար են եղել, չը հասնելով իրենց նպատակին:

Եւ ահա այդպէս, այդ խռովարարները մի տեղ աղ ու հաց են ներկայացնում, մի ուրիշ տեղ ջարդելով մեր եղբայրներին, իրանց լրագրերում ամեն յանցանք մեր վրա են նետում, մոռանալով որ հէնց իրանց նաւերով (Սարուխան, Մարիամ) և իրանց միջոցով փոխադրված զէնքերն ու ռազմամթերքն էին, որ բռնվեցին: (Մեր կարծիքով «Հաբլ-օլ Մաթին»-ի խմբագրութիւնը ակնարկում է «Кавказъ» լրագրի այն սուտ հաղորդագրութիւնը, որի մէջ ասված կար, թէ իբր եղբ. Թումանեանցները սնդուկներով զէնքեր են փոխադրում Պարսկաստան. բայց, փառք Աստուծոյ, որ այդ լուրը ժամանակին և պաշտօնապէս հերքվեց պարսից արտաքին գործերի մինիստրութեան կողմից, ի մեծ ամօթ «Кавказъ» և իր եղբայրակից «Հայաթ» լրագրերի խմբագրութիւնների):

Վերջնել և մի առ մի հերքել այդ բոլոր զրպարտութիւնները աւելորդ կը լինէր. մենք միայն ցաւել կարող ենք խաւարամիտ մամուլի էջերում լոյս տեսած այդպիսի անմիտ յօդուածների վրա և ցաւում ենք գլխաւորապէս այն պատճառով, որ մարդակեր գաղափարների զոհերից մէկն էլ լինում է «Հաբլ-օլ-Մաթին»-ի խմբագրութիւնը: Սակայն, յուսով ենք, որ կը գայ մի ժամանակ, երբ խաւար ույժերը տեղի կը տան նոր գաղափարներով օժտված ազատամիտ հոսանքին, որը զանազան Վելիչկօների, Աղաևների և Սուվօրինների գլխին կարդալու մի դատավճիռ միայն կունենայ. «խաւարի որդիք էիք, և խաւարի բաժին դարձաք»:

II

Նամակ Սալմաստից

Սալմաստը մի սահմանակից քաղաք է Օսմանեան կայսրութեան. այդտեղ են կենտրոնացած Ռուսաստանից, Թիւրքիայից և այլ տեղերից փախած հայերի մեծ մասը, որոնք ունեն որոշ յեղափոխական կազմակերպութիւններ «Հնչակ» և «Դաշնակ» (երևի Հ. Յ. Դ. մասին է խօսքը), որոնք իրանց ծրագիր են ընդունել զէնքի ույժով ձեռք բերելու իրանց 600 տարվայ կորցրած թագաւորական փառքը:

Հայը, այդ անհանգիստ ազգութիւնը, գործում է Պարսկաստանում ազատ կերպով. երբ Կովկասի վերջին կոտորածների լուրը հասնում է նրանց, «Դաշնակ» կուսակցութեան Սալմաստի կօմիտէի նախագահը, Թաւրիզից «Նարընջակներ» (զինամթերք) է պահանջում և ստանում է նրանցից երկու արկղ: Այդ բոլորը կատարվում է կառավարութեան աչքի առաջ, քթի տակ, և լռում է, անտարբեր վերաբերվելով այն լուրերին, թէ ինչպէս, նրանք (հայերը) խռովութիւններ են յարուցանում օսմանեան և ռուսաց կայսրութիւններում և որ մի այդպիսի օր էլ իր համար է վերապահված: Նոյն իսկ կովկասեան խռովութիւնների ժամանակ, նրանք սկսեցին ահագին քանակութեամբ զէնքեր գնել. 10 թուման արժեցող ռէվօլվերը, 40—50 թումանանոց հրացանը ծախվում էր առաջինը 20—30, իսկ երկրորդը 100 թումանով: Պէտք է վերջապէս կառավարութիւնը օր առաջ և քանի ուշ չէ մտածէ այս բոլորի մասին յետագայ բարդութիւնների առաջն առնելու համար»:

Սրան էլ մենք հետևեալը կաւելացնենք. առաջին, որ յօդուածագիրը զուր տեղից է ճգնում զինել պարսից բարեխնամ կառավարութիւնը անմեղ և խեղճ սալմաստեցիների դէմ: առանց այն էլ նրանց դառն քրտինքով վաստակած կօպէկները լաւ կերպով են մարսվում կաշառակեր և կեղեքիչ «սարփարաստների» կոկորդում, և երկրորդ, որ հայ յեղափոխական կազմակերպութիւնը, Դաշնակցութիւնը, գլխաւորապէս, իր բազմամեայ գործունէութեան ընթացքում ցոյց է տուել, որ ինքը սեպարատիստ գաղափարներ չէ քարոզում, և որ ինքը մի բան է միայն ցանկանում, կռուել թիւրքական ներկայ ռէժիմի դէմ, կասեցնել «Մեծ-մարդասպանին» նորանոր գազանութիւններ կազմակերպելը, բաւական համարելով այն, որքան նրա ձեռքերը ներկվեցին տասնեակ հազարաւոր հայերի արիւնով. իսկ եթէ յեղափոխական գործունէութիւն նկատվեց վերջերս նաև Ռուսաստանում, այդ էլ այն պատճառով, որ այնտեղ տեղի ունեցան այնքան սարսափելի տեսարաններ, երբ նա (Հ. Յ. Դ.) տեսաւ, որ ազգային ինքնուրոյնութիւնը վտանգված է, շնորհիւ Պլէվեան և Գօլիցինեան մարդակեր ռէժիմի, և որ ամենագլխաւորն է, առաջ եկան թուրք-հայկական ընդհարումներ, երբ ջարդվում էր հայը, հողի հետ հաւասարվում նրա գոյքն ու ընտանեկան պատիւը, ահա այդ ժամանակ միայն Դաշնակցութիւնը, իր գործունէութեան ասպարէզ ընտրեց նաև Կովկասը, ուր պաշտպան կանգնեց հազարաւոր անզէն ժողովրդին:

Թաւրիզեցի

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՁԱՅՆԸ

Մօտ ժամանակներս Վաշինգտոնում մի բազմամարդ միտինգ կայացաւ Բէլասքօի թատրօնում, որի ժամանակ քննութեան առնվեց հրէերի վիճակը Ռուսաստանում: Որովհետև ճառախօսների մեղադրանքները ռուսաց կառավարութեան դէմ շատ խիստ են և ներկայ պայմաններում նրանց տպագրելը անկարելի է, ուստի բաւականանում ենք ճառերից քաղուածքներ բերելով:

Միտինգին մասնակցելու համար եկել էին Հիւսիսային-Ամերիկայի նահանգներից բազմաթիւ քաղաքացիներ, այնպէս որ թատրօնը ամբողջապէս լի էր: Միտինգի նպատակն էր կարեկցութիւն արտայայտել ճնշված ռուս քաղաքացիներին, ուրիշ ցեղերին և այլն,

Միտինգին ներկայ էին յայտնի սենատորներ ու հռչակաւոր գործիչներ: Նախագահում էր Ուիլիամ Սէլցեր, որը ի միջի այլոց ասաց. «Մենք այսօր հաւաքվել ենք բողոքելու հրէերի այն դրութեան դէմ, որը տիրում է այժմս Ռուսաստանում:

«Քաղաքակիրթ աշխարհը ցնցված է, վիրաւորված, վշտացած, վերջին երկու տարիների ընթացքում Ռուսաստանում կատարվող տմարդի գազանութիւններից և սարսափելի խստութիւններից: Այդ կարճ ժամանակամիջոցում, արժանահաւատ աղբիւրներից իմ ստացած տեղեկութիւնների հիման վրա, աւելի քան 100,000 ռուս քաղաքացիներ՝ օգնութիւնից և պաշտպանութիւնից զրկված տղամարդիկ, կանայք և երեխաներ, որոնք միանգամայն ոչ մի բանում յանցաւոր չէին, անխիղճ և տմարդի կերպով, անգթաբար և և գազանօրէն տանջվեցին և մորթոտվեցին: Այդ տեսակ օրինակ դեռ ևս չէ եղել տիեզերական պատմութեան մէջ, նոյն իսկ ամենամռայլ ու սարսափելի նրա շրջաններում: Այսօր մարդկութիւնը կանգնած է մի ահեղ ու սոսկալի պատկերի առաջ:

«Ինչպիսի տեսարան է ներկայացնում Ռուսաստանը քսաներորդ դարի արշալոյսին: Կոտորածները, աւազակութեան, տանջանքների ու սպանութեան բարբարոսական գործը շարունակվում է և աճում: Հազարաւոր անպաշտպան տղամարդիկ, կանայք և երեխաներ քաղաքակիրթ աշխարհի առաջ սպանվում են, ինչպէս սպանդանոցում, և ոչ մէկը պետութիւններից չէ բարձրացնում իր բողոքի և պարսաւանքի ձայնը:

«Պաշտօնական Ռուսաստանը պատասխանատու է այդ բոլոր անգթութիւնների համար: Ես, որպէս կօնգրէսի անդամ, այդ յայտարարութիւնը իմ պատասխանատուութեան վրա եմ առնում: Արդէն, հանդիսաւոր կերպով ապացուցված է չը հերքված և մի և նոյն ժամանակ ընդարձակ չափերով տարածված տիրապետող կարծիք է տիրում ամեն տեղ ամբողջ աշխարհում, որ այդ բոլոր սարսափելի, ոճրագործութիւններին, թալաններին, աւազակութիւններին և աւերածութեանը, այդ գազանային անգթութիւններին թև է տալիս ռուս բիւրօկրատիան: Յանցաւոր բիւրօկրատիան չի խուսափիլ պատասխանատուութիւնից:

«Ես յուսով եմ, որ այն բոլորը ինչ անում ենք մենք այստեղ, ինչ որ խօսում ենք այստեղ կը հասնի Պետերբուրգին: Ես հաւատացած եմ, որ մեր բողոքը, մեր պախարակութիւնը, յայտարարութիւնները լսելի կը դառնան Պետերբուրգում, և որ ռուսաց կառավարութիւնը հոգ կը տանի դադրեցնելու անմեղ մարդկանց խմբական ջարդերը:

«Մենք հասարակական կարծիքին ենք բողոքարկում, մարդկութեան անաչառ դատաստանին ենք դիմում, և գիտենք, որ եթէ սկսի այդ դատաստանը գործել, նրան կը մասնակցեն ամբողջ աշխարհը»:

Ուիլիամ Սէլցերը վերջացրեց ճառը շնորհակալութիւն յայտնելով Նախագահ Ռուզվէլտին իր «եռանդուն և անխոնջ ձգտումների առիթով բարելաւելու Ռումինիայի, Թիւրքիայի և Ռուսաստանի տառապեալների և հալածականների կեանքի պայմանները»:

Այնուհետև խօսեց Իլլինոյսի նահանգի ներկայացուցիչը՝ պ. Բէնէյ:

«Ամերիկեան, ասաց նա, նոր դարագլուխ է սկսում ձգտելով ստեղծել ու հաստատել խաղաղութիւն երկրագնդիս ամենահեռաւոր անկիւններում: Շնորհիւ այն լայն համակրանքի, որը վայելում է ամերիկական ժողովուրդը, Հեռաւոր Արևելքում և հեռու Մանջուրիայում լռեցին թնդանօթի որոտները, անգղները այլ ևս այնտեղ չեն սաւառնում, այլակերպվում, դաշտերում ցիր ու ցան ընկած, անհամար դիակների վրա: Մենք փրկեցինք Ռուսաստանին վերջնական պարտութիւն կրելուց յաղթական ճապօնացիներից և այժմս էլ պէտք է փրկենք հէնց իրանից»:

Ապա իր ճառի շարունակութեան մէջ մեղադրում էր ռուսաց կառավարութեանը և աւելի խիստ կերպով, մի քանի բարձրաստիճան անձանց: Այնպէս որ շարունակութիւնը ընթերցողներին տալ հնարաւորութիւն չունենք:

Պ. Բէնէն իր ճառը այսպէս վերջացրեց:

«Մեր զայրոյթի բողոքը, որ այսօր արտայայտում ենք այս ժողովում, կանցնի մեր ահագին հասարակապետութեան վրայով, քաղաքից քաղաք, գիւղից գիւղ և ընդունվելով Միացեալ-Նահանգների 80 միլիօն ազգաբնակութեան կողմից, կը սլանայ օվկիանոսների վրայով և կը հասնի մինչև Ռուսաստանի կազակների փոքրիկ գիւղերին և Պետերբուրգի հոյակապ պալատներին»:

Նոյն ոգով խօսեցին նոյնպէս Մուսիրն, դատաւոր Ստոֆֆիրդ և ուրիշները: Պ. Տաուն, Նիւ-Եօրկից եկած, կարդաց բանաձևը, որը միաձայն ընդունվեց: Բանաձևի մէջ էին մտնում ճառախօսների բոլոր ճառերը և հետևեալ վերջաբանը.

«Սարսափելի անգթութիւններ անելը համարվում է ոճրագործութիւն ամբողջ մարդկութեան դէմ և հետևաբար ռուսաց կառավարութեան պարտքն է անմիջապէս և առմիշտ դադարեցնելու»: Մի և նոյն բանաձևով շնորհակալութիւն էր արտայայտված նախագահ Ռուզվէլտին նրա ձգտումների համար՝ թեթևացնելու Ռուսաստանի տարագիրների վիճակը: «Մենք, խորին յարգանքով վերաբերվելով դէպի նա, ասված է բանաձևի մէջ, խնդրում ենք, որ նա շարունակի իր սկսած գործը յօգուտ մարդկութեան, որպէս զի չընդհատվէին նրա մարդասէր ձգտումները՝ ամրապնդելու եղբայրութիւնը և խաղաղութիւնը մարդկանց մէջ: Այդ բանում նա կարող է յուսալ, որ մեր երկրի ամեն մի ազնիւ ու մարդասէր քաղաքացի աջակցութիւն ցոյց կը տայ»: (Баку)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ֆրանսիա: Ժօրիսին մահվան դատապարտվելը Թիւրքայ եղեռնադատ դատարանի ձեռքով և նրա վճռաբեկ գանգատի անհետևանք մնալը մեծ յուզմունք առաջ բերեց Բէլգիայում և Ֆրանսիայում: Ֆրանսիական պարլամենտի անդամ պ. Ֆրանսիս դը Պրէսանսէ, որ նաև «Մարդկային իրաւանց Միութեան» նախագահն է, հետևեալ բողոքն է ուղղել ֆրանսիական ազգային խորհրդի նախագահին. «Պ. նախագահ. Պօլսից եկած մի հեռագիր տեղեկացնում է, թէ օսմանեան վճռաբեկ ատեանը վերջերս վերահաստատել է Կ. Պօլսի ատեանի տուած դատավճիռը՝ որով բէլգիացի Ժօրիսը մահվան է դատապարտված:

Պատիւ ունենալ ձեր ուշադրութիւնը հրաւիրելու այդ դատապարտութեան վրա, որ ոչ միայն բռնաբարում է Բէլգիայի և Թիւրքիայի միջև կայացրած դաշնագրութեան սահմանները, այլ նոր և ժպիրհ մի ոտնձգութիւն է եւրօպական պետութիւնների իրաւունքների դէմ: Ֆրանսիան թոյլ պէտք է տայ կատարելու այդ կեղծ օրինական ոճիրը, որ թիւրքական արդարութիւնը պատրաստել է:

«Մարդկային իրաւունքի Միութիւնը» ուրիշ բան չէ կարող անել, պ. նախագահ, բայց եթէ այդ տեսակ մի ոճիրի պատասխանատուութիւնը ձեր վրա ձգել, եթէ միայն հանրապետութեան կառավարութիւնը իր ձեռնպահութեամբ այդ գործին մէջ յանցաւոր հանդիսանար:»

— Ֆրանսիական մամուլի մի մասի գործածած ազդեցիկ լեզուն ֆրանս-գերմանական վէճի առիթով, Մարոքօյի ոստիկանութեան խնդրին վերաբերեալ, առիթ տուաւ պ.պ. Ժօրէսին, Վայեանին և Սամբային հարցապնդումն անել կառավարութեան այս մասին «Արդեօք նա իր վրա է առնում պատասխանատուութիւնը մամուլի արշաւանքի, որ ձգտում է ստեղծել Մարոքօյի հարցի մէջ վտանգաւոր բարդութիւններ»: Մինիստրների խորհրդի նախագահ պ. Ռուվիէն պատասխանեց որ «նա ոչ կարող է հաւանութիւն տալ, ոչ չը տալ մամուլին, որը օրէնքով իրան տուած ազատութիւնն է գործադրում»: Սակայն հաստատ է և այն, որ Պարիզի մի քանի մեծ լրագիրներ արտաքին գործերի մինիստրութեան կիսա-պաշտօնական օրգաններն են:

— «Matin» լրագիրը հաղորդում է իբրև լուր, որ Ալժեզիրասի կօնֆէրենցիայի ամերիկական պատուիրակ Ուայտը միջնորդ կը հանդիսանայ Ֆրանսիայի և Գերմանիայի մէջ: Ինքն Ուայտը յայտնել է, որ այդ լուրը անհիմն է: «Standard» լրագրի խօսքով, գերմանական դեսպան Ռադօլինը իր վերջին տեսակցութեան ժամանակ Ռուվիէի հետ, սաստկապէս բողոքեց այն հակա-գերմանական արշաւանքի դէմ, որ սկսել է մամուլը: Նա յայտնել է, որ այդ տեսակ արշաւանքը որ և է հնարաւորութիւն չէ թողնում բաւարար կերպով լուծել բոլոր վիճելի կէտերը Գերմանիայի և Ֆրանսիայի մէջ:

Անգլիա: «Բիրմինգամ Պօստ» լրագիրը հաստատում է, թէ անգլիական նոր կաբինետը դիտաւորութիւն ունի թուրքական գործերի վերաբերմամբ մինչև այժմ եղածից շատ աւելի խիստ քաղաքականութեան հետևելու: Այդ մտքով արդէն հրահանգներ են ուղարկված Պօլսի անգլիական դեսպան Սըր Օ'Քօնըրին:

— Անգլիայում պահպանողական — ունիօնիստ և այժմ ընդդիմադրական կուսակցութեան մէջ վէճ է ծագել, թէ ո՞վ պէտք է լինի ընդդիմադրութեան կուսակցութեան պարագլուխը. Բալֆուրը թէ Չէմբերլէնը: Այդ վէճը այժմ վճռվել է յօգուտ Բալֆուրի Նա միաձայն ընդունվեց ընդդիմադիր կուսակցութեան պետ, երբ սկզբունքով միացաւ Չէմբերլէնի մաքսային ծրագրին: Բայց ունիօնիստների այն ֆրակցիան, որ կամենում է հաւատարիմ մնալ ազատ առևտուրի սկզբունքներին, իրան պարագլուխ է ընտրել Դէվօնշիրի դքսին: Ինչպէս յայտնի է, Չէմբերլէնի մաքսային ծրագիրը ձգտում է մաքսային և հետևաբար պաշտպանողական սիստեմ մտցնել Անգլիայում:

—Փետրվարի 10/23-ին Լոնդոնի Վէստմինստր պալատում պէտք է կայանար մի միջազգային կոնֆերանս Արևելեան խնդրի մասին, ցոյց տալու համար, որ անհրաժեշտ է անմիջապէս վարչական իրաւական ռէֆօրմներ մտցնելու Թիւրքիայում, համաձայն Թիւրքաց կառավարութեան խոստումներին և այն միջազգային պարտաւորութիւններին, որ նա յանձն է առել Բեռլինի դաշնագրի 23 և 61 յօդուածներով:

Կոնֆերանսին նախագահելու էր Դ'Էստուրնէլ-դը Կօնստանը:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

12 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 փետրվարի: Սուրբ Սինօդը որոշեց՝ արձակված համարել հոգևոր սեմինարիաների այն աշակերտներին, որոնք յունվարին անձնատուր չեն եղել ուսումնարանական պարապմունքներին: Հետևեալ ուսումնական տարում կընդունվեն միայն այն արձակվածները, որոնք կունենան վարք ու բարքի վկայութիւն:

ՊԱՐԻԶ, 11 փետրվարի: (Հաւաս): Պատգամաւորների պալատում Ռուվիէն պատասխանելով Մարլօյին, ասում է. որ նա որոշել է յենվել ձախակողմեան մեծամասնութեան վրա, չը մերժելով և դրսի օգնութիւնը:

ԲԵԼԳՐԱԴ, 11 փետրվարի: Բօլգարական կառավարութիւնը պատասխանեց Սերբիայի նկատողութեան թէ հակառակ չէ այն փոփոխութիւններին, որոնց Աւստրօ-Ունգարիան պահանջում մտցնել մաքսային դաշնագրութեան մէջ, միայն թէ տեսնէ, այդ—փոփոխութիւնների ընդունելու դէպքում—հէնց իբրև դաշնագրութեան տեսական ոչնչացումը: Ծայրայեղ արմատականները վճռեցին ընդունել աւստրօ-ունգարական պայմանները՝ շարունակելու համար առևտրի դաշինքի բանակցութիւնները:

ԲԵՌԼԻՆ, 11 փետրվարի: (Վօլֆ) Կայսերական զոյգի արծաթեայ հարսանիքին հասան Վիբորգեան գնդի պատգամաւորութիւնը, գլլուխ ունենալով գեներալ-մայոր Զայինչգովսկի հրամանատարին:

ՏՕԿԻՕ, 11 փետրվարի: (Րէյտէր): Վերին պալատն ընդունեց պատերազմական փոխատուութիւնների կօնսոլիդացիայի օրէնքը:

ՏՐԻԷՍՏ, 11 փետր.: (Բիւրօյի Թղթ.): «Լլօյդ» նաւային ընկերութեան բանուորները միաձայն վճռեցին աշխատել:

ԴՈՒՐԲԱՆ, 11 փետր. (Րէյտէր): Պատրաստուած են 500 հետեւակ մարդ և մի թնդանօթ—ուղարկելու համար Դուրբանից դէպի հիւսիս-արևելք—քառասուն մղոն հեռաւորութեամբ անկարգութեան վայրերը:

ՌՕՍՏՕՎ—Դ. Վ. 11 փետրվ.: Քաղաքային ընտրողների ցուցակները ցուցադրվում են դեկտ. 25-ի համար: Հողատէրերի ցուցակները դրված է փետրվ. 9-ին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 փետրվ.: Պաշտօնական: Գեներալ Պօնտելէէվի հեռագիրը Չերնիգօվից կայսրի անունով փետրվարի 10-ից. «Օրլօվի, Կուրսկի և Պոլտավայի նահանգներից յուզիչ տեղեկութիւններ չկան. Նահանգապետները հաստատում են տիրող համատարած հանգստութեան մասին: Կրեմէնչուգի ժամանակաւոր գեներալ-նահանգապետը՝ բոլոր շրջանները այցելելուց յետոյ հաղորդում է գիւղական ընկերութիւնների մէջ տիրած լիակատար հանգստութեան մասին, բայց գտնում է, որ գրգռված դրութիւնը քաղաքում և աւարձանում միայն ճնշված է, բայց ոչ հանգստացրված: Այսօր վերադարձաւ հիւսիսային և մասամբ Չէրնիգօվի նահանգի գլխաւոր գաւառների շրջագայութիւնից, ժողովեց տանուտէրներին, գիւղապետներին և շինական հասարակութիւնների լիազօրներին: Ազգաբնակութեան տրամադրութեանը մասին այն տպաւորութիւնն է ստացել, որ ժողովուրդը լիովին ընդունում է կատարված կողոպտումների և բռնութիւնների դատապարտելի յանցանքը և իշխանութիւններին հնազանդելը ու ինքնուրոյն գիտակցութիւն ունի, թէ անհրաժեշտ է բռնել և մատնել գրգռիչներին և ագիտատօրներին, հեռացնել իրանցից արատաւորող մարդկանց: Անտառների կտրատելը վերջացած է, կողոպտված իրերը վերադարձնվում են տէրերին: Չերնիգօվում և ամբողջ նահանգում ընդհանրապէս բոլորովին հանգիստ է, հայցում եմ ամենաողորմածաբար Ձեր Մեծութեան կամքը—վերցնելու Չերնիգօվի նահանգից արտակարգ և ուժեղացրած պահպանութիւնները, չը տարածելով սակայն այդ քաղաքի և Կօնօտօպ կայարանի վրա, որտեղ, ցանկալի է, ժամանակաւորապէս պահել զինուորական դրութիւնը»:

ՐԷՎԷԼ, 11 փետրվարի: Կայացաւ Բարձրագոյն նշանակած առանձին քննիչ յանձնաժողովի առաջին նիստը գեներալ Սորէլնիկովի նախագահութեամբ: Յանձնաժողովը երեւան պիտի հանի այն հանգամանքները, որոնցից առաջացան Րէվէլում օգոստոսեան անկարգութիւնները:

ԽԱՐԿՕՎ, 11 փետրվարի: Նահանգական յանձնաժողովը քննելով մինիստրութեան հարցը, գտաւ, որ Դումայի անդամների ընտրութիւնները կարելի է կատարել մարտի 26-ին:

ՊՐՍԱԿՕՎՆԱ (Ստաւր. նահ.) 11 փետրվարի: Աբրէկների յարձակումը Ախիկուլակսկի ոստիկանութեան վրա շարունակվում է. կանչված են կազակներ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 փետրվարի: Պաշտօնական: Մինիստրների խորհրդի փետրվարի 10-ի նիստը նուիրված էր ագրարային շարժումի քննութեան, Տուլսկի նահանգական ազնուականութեան ժողովի որոշումների, Մօսկվայի նահանգական գաւառական ազնուականութեան պարագլուխների համագումարի արձանագրութիւնների և մի քանի ուրիշ գրութիւնների հետ: Խորհուրդն անհրաժեշտ է գտնում տեղեկացնելու ազգաբնակութեան-սեփականութեան իրաւունքների բռնի խախտումը թոյլ չը տալու մասին: Ապա խորհուրդը կանգ առաւ հարցի միւս կէտի, այսինքն գիւղացիական հողային բարեկարգութեան անբաւարարութեան վրա և այն անհրաժեշտութեան, որ մինչև Դումա հրաւիրելը հերթական դարձնվին նրա մի քանի մասնաւոր կողմերը: Խորհուրդը կանգ առաւ այն մտքի վրա, թէ պէտք է մի քանի տեղերում կազմել պաշտօնեաներից և զեմստվօների և գիւղացիների ընտրեալներից առանձին հաստատութիւններ-հետազօտելու համար տեղական գիւղացիութեան հողային կարիքները և հողային բարեկարգութեան բարելաւման միջոցները: Զեմստվային մասի կառավարչի առաջարկած տեղեկութիւններից խորհուրդը տեսաւ, որ այն յանձնաժողովը՝ որ կազմված էր քննելու տեղական հողատիրութեան և գնման վճարումների փոփոխման յարաբերութիւններից առաջացած պատճառները, եկել է ճշգրիտ եզրափակման, որ շուտով կընտրուի. Նոյն նիստում խորհուրդին զեկուցվեց այն դժուարութիւնների մասին, որ լինում են առետրի և ֆինանսների մինիստրութիւնների՝ երկաթուղային գործերի վարչութեան նուէրների կարգաւորման Սիբիրի զինուորական վճռակների բայօնների փոփոխման՝ և կօզակներին առաջիկայ ցանքսի մշակութեան համար թօշակների բաշխման ժամանակ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 փետրվարի: Ներքին գործերի մինիստրը ուղարկել է հետեւեալ հեռագիրը նահանգապետներին. «առաջարկում եմ ժամանակ նշանակել-սկսելով փետրվ. 20-ից ընտրելու լիազօրներ՝ փոքր հողատէրերի նախապատրաստական նիստերին և շրջանային ժողովներին մասնակցելու համար և բանուորներից: Այնտեղ, որտեղ փոքր հողատէրերի ցուցակների յայտարարելու ժամանակը կը թոյլատրվի, ցանկալի է վերջացնել բոլոր ընտրութիւնները մարտի 10-ի մօտերը: Ձեռք առէք ամենաեռանդուն միջոցներ ընտրութիւնների կատարման համար»: Սուդժանի զեմստվային վարչութեան նախագահ իշխան Պետր Դոլգորուկօվի ձերբակալման լուրի առթիւ «Русс. Бог.» ամսագիրը հաղորդում է, թէ Պետերբուրգից այդ բանի մասին ոչ մի հրաման չէ տրված մինիստրների խորհրդին և ներքին գործերի մինիստրին այդ առթիւ ոչ մի տեղեկութիւն չէ տուած:

ՌԻԳԱ, 11 փետրվարի: Օրը ցերեկով մի քանի չարագործներ, զինված բերդաններով ներս խուժեցին Ռիգայի դատարանին կից խնայողական դանձարանը և գողանալով 500 րուբլի անյայտացան:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 փետրվարի: Պետերբուրգի երդուեալ-հաւատարմատարների խորհրդի յորդորմամբ Դրուզինինը վերցրեց՝ կուշկա բերդում բանտարկված ինժինէր Սօկօլօվի յայտնի գործի պաշտպանութիւնը: Գործը քննելու է Սեւաստոպոլում, տաշկէնդի դատաստանական պալատը:

Կ. ՊՕԼԻՍ, 11 փետրվարի: Լուր է տարածված, որ Միտրօվիցից դէպի հարաւ-արեւմուտք Դիբնօվայի մօտ 2000 անկանոն ալբանացիներ ցոյց սարքեցին: Բ. Դուռը համապատասխան կարգադրութիւն արաւ Ուսկուբի վալիին:

ՍԻՄԲԻՐՍԿ, 11 փետրվարի: Բօրսային ժողովը որոշեց յանձնաժողովին քննութեան յանձնել՝ Պետերբուրգում Վօլգայի ներկայացուցչութեան կազմակերպութեան հարցը, Վօլգայի նաւային արդիւնաբերութեան շահերը պաշտպանելու համար:

ԲԷԼՕՍՏՕԿ, 11 փետրվարի: Գիւղացիների մէջ յեղափոխական պրօպագանդայի ընդարձակօրէն տարածվելու պատճառով, կազմված է զեմստվային պետերից մի յանձնաժողով կռվելու համար չարիքի դէմ:

13 փետրվարի

ՊԷՐԻՄ, 11 փետրվարի: Թուրքական զօրքերը Սանաայից յետ նահանջեցին դէպի Տայսու, հալածվելով արաբներից: Երկիրը խիստ յուզվում է. անսովոր անձրևները հեղեղում են երկիրը: Թուրքերի կորուստները զգալի են. Տայսի մօտ կռիւը շարունակվում է:

ԿԻԷՎ, 11 փետրվարի: Համալսարանի խորհուրդը որոշեց Պետերբուրգ ուղարկել պատգամաւորներ՝ միջնորդելու Կիէվի կանանց բարձր համալսարաններում պարապմունքների վերսկսման մասին:

ՊԱՐԻԶ, 11 փետրվարի: Պաշտօնապէս հրատարակված է ֆրանս-ռուսական առեւտրական կօնվէնցիայի վաւերացումը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 փետրվարի: Փետրվարի 9-ին Ցարսկօէ Սէլօում Վլադիմիրեան ազնուականութեան պատգամաւորութեանը կայսրը ասաց. «Ես ուրախ եմ տեսնելով ձեզ այստեղ: Հաղորդեցէք Վլադիմիրեան ազնուականութեան Իմ սրտանց շնորհակալութիւնը՝ ձեր գրութեան մէջ Ինձ արտայայտած զգացմունքների համար: Ձեր հպատակութիւնը և պանծալի ծառայութիւնը գահին և հայրենիքին—Ինձ քաջ յայտնի է: Ես դրանց միշտ հաւատացել եմ: Կրկնում եմ Տուլսկի և Տամբօվի ազնուականներին, որ գիւղացիների հողային բարեկարգութեան ժամանակ ձեր սեփականութեան իրաւունքը անձեռնմխելի կը մնայ: Իմ ցուցմունքներով մշակվում են ներկայումս միջոցներ՝ թեթեւացնելու աւելի հողազուրկ աշխատող գիւղացիների կարիքները, պահպանելով ճշգրտապէս նահանգական հողային սեփականութեան անդառնալի պայմանը: Շնորհակալ եմ ձեզանից Ինձ օգնելու պատրաստակամութեան համար»:

ՆԻՒ-ԵՕՐԿ, 11 փետրվարի: Վերսկսվեց Մարտինիկում Մօնպէլէ հրաբուխի գործողութիւնը: Կղզու բնակիչները սարսափի մէջ են. հրաբուխի արձակած քարերից վիրաւորված են 5 մարդ և տարված են Պորտ-դէ-Ֆրանս հիւանդանոցը: Շատ տներ վնասված են երկրաշարժից: Վենցենտէն կղզում Լեասուֆրիէրը եռանդուն գործունէութիւն է ցոյց տալիս: Մարտինիկի, Վենեէնտի, Գվադելուպի, Սանտա-լիւչի և Դոմինիկի երկրաշարժները աւելի ուժեղ են չորս տարի առաջ եղածներից: Քաղաքի բնակիչները փախչում են, վախենալով շինութիւնների քանդվելուց:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 փետրվարի: Պրիբալտեան շրջանի մասնաւոր ուսումնարանական հաստատութիւններում մտցվում է դասաւանդել տեղական լեզուներով: Այս հարցը քննվելու է Պետական Խորհրդում փետրվարի 17-ին:

ՕԴԷՍԱ, 12 փետրվարի: Գիշերվայ ժամի երկուսին Շտէրնբէրգի տան խուզարկութեան ժամանակ, անիշխանականները մի շարք կրակ բացին երևացող ոստիկանութեան վրա: Խիստ վիրաւորված է տան դռնապանը, կինը և ոստիկանական վերակացուն: Անիշխանականները կարգաւորելով զէնքերը և ռումբերը, թաքկացան վերնայարկում: Կանչվեցին զօրքեր. սկսեցին խիստ հրացանաձգութիւն: Անիշխանականները վերնատնից նետեցին երկու ռումբ, որ պայթեցին, բայց ոչ մի վնաս չը տուին: Զօրքը դէպի տանիք արձակած գնդակներով սպանեց երեք անիշխանականների, իսկ երկուսին բռնեց: Այս դէպքը քաղաքում մեծ տպաւորութիւն գործեց:

ՄՕՍԿՎԱ, 12 փետրվարի: Հոկտեմբերի 17-ի համագումարի նիստում եկեղեցական հարցից յետոյ ցանկալի համարվեց ճիւղեր հաստատել քննելու հաւատին և եկեղեցուն վերաբերվող հարցերը, առայժմ Մօսկվա, Պետերբուրգ, Նօվոչերկասկ, Վօրօնէժ, Եկատերինօսլավ և Օրեօլ քաղաքներում: Ճիւղերում կարող են մտնել ուղղափառ ստարօօբրյադցիներ և ուրիշ դաւանութիւններից եկեղեցական գործերով հետաքրքրվող անձինք և նոյն իսկ միութեան չը մասնակցող մարդիկ: Ճանաչված է խղճի ազատութիւն, և եկեղեցական ժողովներ կազմելու սկզբունքի վերականգման անհրաժեշտութիւնը:

ԲԵՐԼԻՆ, 17 փետրվարի: Կայսերական զոյգերի արծաթեայ հարսանիքի առթիւ կազմած տօնախմբութիւնները ամբողջ թափով շարունակվում են. պատարագից յետոյ նորին մեծութիւնները ընդունեցին պալատում պարլամէնտի, զօրքի և նաւատորմղի բարձր պաշտօնեաների պատգամաւորութիւնը, նոյնպէս գեներալ- մայոր Տատիշչէվին և ռուս լէհերի պատգամաւորութիւնը, որոնք շնորհաւորական ճառեր արտասանեցին և թագաւորին մատուցին ծաղկէփնջեր:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 փետրվարի: Մօսկվայի դատաստանական պալատի քննիչ-դատօնի խորհրդական ֆօն-Կլուգէնը նշանակված է բանտային գլխաւոր վարչութեան կառավարիչ:

ՎԱՐՇԱՎԱ, 12 փետրվարի: Պրագայում կայացող նախընտրողական ժողովը ընդհատեց սօցիալիստների ամբոխը ատրճանակներով: Տեղի ունեցաւ կռիւ, որի ժամանակ սպանվեց ժողովին մասնակցողներից մէկը, իսկ միքանիսները վիրաւորվեցին,

ԿԱԼԻՇ, 12 փետրվարի: Կաթոլիկների հոգեւոր իշխանութիւնների հրամանով արձակված են երկու քահանաներ՝ մարիավիտների աղանդին պատկանելու պատճառով: Աղանդաւորները չեն ընդունում պապի գերիշխանութիւնը, պահանջում են ընտրողական սկզբունք քահանայ նշանակելու դէպքում, սրբապղծութիւն են համարում կրօնի տեսակէտից հոգեւորականութեան վերցրած տուրքը արարողութիւնների համար, չէչտելով աշխարհական իշխանութիւնների օրինաւոր պահանջները ունեցած վերաբերմունքի հաւատարմութիւնը:

ՆՕՎՕՉԵՐԿԱՍԿ 12 փետրվարի: Երէկ գեներալ-ադիւտանտ Գօլիցինը պատգամաւորութեան միջոցով յանձնեց դօնսկի զօրքին կայսերական շնորհած հրովարտակը, որով հաստատվում են բոլոր իրաւունքները և զօրքին առաջ շնորհած առաւելութիւնը: Այսօր կայացաւ փառաւոր զօրաշրջման կայսերական հրովարտակի ստացման առթիւ:

ՌԻԳԱ, 11 փետր.: փետր. 8-ին հեռագրով հաղորդվեց չորս մեղապարտների մահվան պատժի կատարման մասին: Այդ լուրը ճիշտ չէ. մահվան դատապարտված 4 հոգուց վճռաբէկ գանգատ ներկայացրին երկուսը—Բարձրագոյն անունով: Բողոքի հետեւանքի մասին առ այժմ ոչինչ յայտնի չէ:

ՎՕՐՕՆԷԺ, 11 փետրվարի: Պաստօրների թեմական ժողովը աշխոյժ անցաւ: Քննվում էին հոգեւորական ներկայ դէպքերը և Դումայի ընտրութիւնները ունենալիք վերաբերմունքի հարցը: Որոշված է 1) Ցաւակցելով կեանքի տրամադրութիւնից, հոգեւորականութիւնը պէտք է ձգտէ ժողովրդին տանել դէպի արդարութեան և սիրոյ ճանապարհները, հակառակ կանգնելով կուսակցական անհամբերողութեան, պէտք է ցոյց տայ հոկտ. 17-ի մանիֆէստի իրականացման անհրաժեշտութիւնը: 2) Հոգեւորականութիւնը պէտք է ամբողջապէս հոգայ մտցնել Դումայում լուսամիտ մարդկանց, որոնք կարողանան օգուտ բերել եկեղեցուն և տէրութեան, 3) Եկեղեցա—ծխական կեանքի վերանորոգութիւնը կարելի է միայն հոկտ. 17-ի մանիֆէստի իրականացմամբ:

ՄՕՍԿՎԱ, 11 փետրվարի: Հոկտեմբերի 17-ի համագումարի նիստում ընդունվեց հետեւեալ եզրափակումը,—ընդունել ընտրողական իրաւունքի փոփոխման ժամանակ ուշադրութեան առնել ներկայացուցչական ճշմարիտ լեզուն, նրա դրութիւնը ուսումնարանում և ինքնավար հաստատութիւններում որոշել օրէնքով:

ՄՕՍԿՎԱ, 11 փետրվարի: Բանուորական հարցի առթիւ համագումարն ընդունեց. 1) անհրաժեշտ է Դումայում թեկնածուներ մտցնել և բանուորներից այնտեղ, որտեղ արդիւնաբերութիւնը նկատելի դեր է խաղում տեղական կեանքում, 2) բանուորների գործադուլները այնպէս միջոցներ, որոնցում գործադուլները խախտում են պետական կեանքի ամենագլխաւոր շահերը—ոչ ցանկալի համարել: 3) Գործարանական ձեռնարկութիւնների բանուորների աշխատանքը օրէնքի պաշտպանութեան տակ առնել, նոյնպէս վարձով ծառայողներինը և արհեստաւորներինը: 4) Ցանկալի համարել բանուորների արհեստակցական և տնտեսական հողի վրա դրած ընկերակցութիւնների կազմելը—շուտափոյթ կռվելու և բանուորների շահերի պաշտպանութեան և նրանց կեանքի բարելաւման հարցի գործնականապէս առաջացնելու համար: 5) Անհրաժեշտ է աջակցել՝ գնելու բանուորներին պետական ապահովագրութեան առաջին հերթում բոլոր ձևերով, 6) ցանկալի է անմիջապէս հոգալ՝ հասարակական, պետական ձեռնարկութիւնների բանուորների արհեստակցական և տնտեսական կարիքներին բաւարարութիւն տալու, որպէսզի բանուորները հիմք չունենան գործադուլներով պաշտպանել իրանց շահերը, 7) տէրութեան ծախսը՝ միջնակարգ և ստորին արհեստագիտական ուսումնարաններ պահելու համար չէ համապատասխանում Ռուսաստանի արդիւնաբերութեան նշանակութեան և չափին, 8) անհրաժեշտ է վերակազմել գործարանական տեսչութիւնը նոր հիմունքներով, գործարանային տեսուչների մասնաւոր քննութեամբ: Երեկոյի նիստում ընդունված են լրացուցիչ եզրակացութիւնները.—բանուորական հարցը չի կարելի վճռել բաւարարութեամբ՝ հէնց բանուորների շահերի տեսակէտից, առանց այն պայմանի, որ բարելաւելով կերաշխաւորէ արդիւնաբերութեան ծաղկելը: Ապա անցան եկեղեցական հարցի քննութեան:

ԿԻԷՎ, 11 փետրվարի: Անդրիէվսկի միջանցքում խուզարկութեան ժամանակ գտնված է ուկրաինայի սօցիալ-յեղափոխական կուսակցութեան գաղտնի տպարանը: Կառավարութիւնից աքսորվում են Եկուտսկի շրջանը 3 տարով 13 մարդիկ:

ԽԱՐԿՕՎ, 11 փետրվարի, Խարկօվ-Բալաշօվսկի գծի 292 վերստ տարածութեան վրա գնացքը խորտակվեց. երեք վագոններ կոտրտված են, մի քանիսները վնասված. ճանապարհորդները ստացան միայն ցնցումներ:

ՕՉԱԿՕՎ, 11 փետրվարի: Հարցաքննված են 50-ից աւելի վկաներ, որոնց ցուցմունքներով հերքված են շատ մեղադրանքներ: Վկաների կարծիքով, նաւաստիները չեն արտասանել ներկայ պետական կազմի տապալման մասին ճառեր, այլ միայն սովորական ձևով քննում էին հոկտ. 17-ի մանիֆէստի հիմնական կէտերը: Պաշտպանութիւնը երեւան է հանում, որ քրէական պատժագրքի 100-րդ յօդ. դատել անընդունելի է: Պաշտպանի միջնորդութիւնը տեսնելու «Օչակով» նաւը և թնդանօթները, որպէսզի ապացուցել որ նաւը չէ ռմբակոծել նաւատորմղին և կասկածելի իրեր տանելու մասին,—դատարանը մերժեց: Շմիդը բացատրութիւններ է տալիս բացարձակ կերպով, լսում է վկաների՝ դէպի միացած մեղադրեալները ուղղած ցուցմունքները, գցելով մեղքը իր վրա:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը նշուած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը Թիֆլիսի ժամանակով):

	Փօստային	Մարդատար.	Արագ.	Ապրանք.
Բագուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ, 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր. գիշ.
Թիֆլիս հասնելը	11 » 10 » »	5 ժ. 31 ր. առ.	1 ժ. 30 ր. ցեր.	9 ժ. 30 ր. գիշ.
Թիֆլիսից դուրս գնալը	11 » 55 » »	6 ժ. 07 ր. առ.	—	—
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 53 » »	7 ժ. 05 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 14 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 15 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 44 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 48 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40 ր. գիշ.
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 46 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38 ր. գիշ.
Բագու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր. ցեր,
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր. գիշ.
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ. 18 ր. գիշ
Ալէքսանդրօպօլից դուրս գալը	7 » 38 ր. եր.	—	—	7 ժ. 06 ր. առ.
Թիֆլիս հասնելը	5 » 10 » առ.	—	—	4 ժ. 48 ր. ցեր.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 22 » գիշ.	—	—	1 ժ. 13 ր ցեր.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 20 » »	—	—	2 ժ. 11 ր. ցեր.
Ալէքսանդրօպօլից դուրս գալը	10 » 15 » առ.	—	—	12 ժ. 50 ր. գիշ.
Կարս հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	4 ժ. 24 ր գիշ.
Երևան հասնելը	4 » 21 » »	—	—	6 ժ. 48 ր. առ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺՇԿԱՊԵՏ
Բ. Նաւասարդեան
Վերադարձաւ և սատանձնելով իր «ԱՌԱՋԻՆ Մ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԸ», վերսկսեց բժշկական գործունէութիւնը: 50—100

ԷԼԷԿՏՐՕ-ԲՈՒԺԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏ
Բժիշկ Միխայել Գեղեվանօվի
Ջղային հիւանդների ընդունելութիւնը
Առաւօտեան ժամի 12-ից մինչև 1-ը,
Երեկոյեան ժամի 6-ից—7-ը,
Կօրգանօվսկայա փող. № 20 Վերայում: Սեփական տ., տէլէֆօն № 791: (ա. օ.) 65—150

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 Թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից:
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզատա. հ.
Յ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային:
Մ. Գ. ԱԻՆՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն.
Զ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ՆԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԳԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Յ. ԴՈՒՐԳԻՆՕՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Մ. ՓՈՒԼԻՆՕՎ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ. և ծաղկահատ.
Խ. Դ. ԱԲԵԱՆՑ—6—7 ժ. ներքին հիւանդ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.
Վճարը 50 կ. չքաւորները ձրի: Համախտաբերի (կօնսիլիում) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ОТКРЫТА ПОДПИСКА
На большую ежедневную, съ полной программой общественно-литературную и политическую газету
БАКУ
(четвертый годъ изданія).
Газета имѣетъ собственныхъ кореспондентовъ въ крупныхъ городахъ Кавказскаго края, а также въ Петербургѣ, Москвѣ и за границей.
Подписная цѣна: для городскихъ подписчиковъ на годъ 7 руб., на 6 мѣс 4 руб., на 3 мѣс. 2 р. 50 к., на 1 мѣс. 1 р. для иногороднихъ подписчиковъ: на годъ 8 р. 50 к. на 6 мѣс. 5 р.. на 3 мѣс. 3 руб., на 1 мѣс. 1 руб. 50 коп.
Для годовыхъ подписчиковъ допускается разсрочка: Для городскихъ при подпискѣ 3 руб, къ 1 апрѣля 2 р., къ 1 іюня 2 р. Для иногороднихъ: при подпискѣ 3 р. 50 к., къ 1 апрѣля 3 р., къ 1 іюля 2 р.
Редакторъ В. А. Арутчевъ.
1—3

Правленіе Кавказскаго Общества исправительныхъ земледѣльческо-ремесленныхъ колоній и пріютовъ проситъ г.г. Членовъ Общества пожаловать въ номѣщеніе Тифлисской Судебной Палаты въ воскресенье 26 февраля сего 1906 года, въ 1 часъ дня, для участія въ обыкновенномъ Общемъ Собраніи членовъ Общества.
ПРЕДМЕТЫ ЗАНЯТІЙ:
1. Отчетъ о дѣятельности Правленія за 1905 годъ.
2. Денежный Отчетъ Общества за 1905 годъ.
3. Приходорасходная смѣта Общества на 1906 годъ.
4. Докладъ ревизіонной комиссіи по отчету за 1905 годъ и по смѣтѣ на 1906 годъ.
5. Вопросъ объ избраніи 4-хъ членовъ Правленія, кандидатовъ и Ревизіонной комиссіи на 1906 годъ.
6. Представленіе Правленія Общества объ утвержденіи въ должности директора колоніи.
Примѣчаніе. Общее Собраніе считается состоявшимся при участіи въ немъ не менѣе 20 членовъ (§ 17 устава Общ.)
1—3

ԼԵՕ
Ս. ՄԵՍՐՈՊ
(Հայ տառերի գիւտի 1500-ամեակի առիթով)
336 երես, գինը 75 կոպ.:
Դիմել՝ «Գուտտէմբերգ» գրախանութը, Թիֆլիս. Նոյն տեղից կարելի է ձեռք բերել ամեն տեսակ դասական և ընթերցանութեան գրքեր: 9—15

ԲԺԻՇԿ Ս. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, միզային, վեներական և մորթու ախտ ունեցող հիւանդներին ամենայն օր, առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Սօլօլակ, անկիւն Բեբուտօվսկի և Պասկևիչյա փող. № 33/15 տ. Միրիմանեանի (նախկին օրիորդաց 3-դ գիմնազ. տուն):
(ա. օ.) 43—100

ԲԺԻՇԿ
Տ. Խախանեան
Ներքին, երեխայոց և վեներակ. հիւանդ.
Ընդունում է առաւօտ. 9—11, երեկ. 5—8, կիրակի օրերին միայն առաւօտը:
Վելեամինօվսկայա փողոց, № 22, Նաստիկօվի տանը:
(չ. ու. կ.) 3—15

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան 5-ից մինչև 7
Վելեամինօվսկայա փողոց № 8: (ե. ղ.) 42—24

ԲԺԻՇԿ
Լևոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների: Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.: Կանանց և երեխաների համար 11—12 ժ.: Հասցէն անկիւն Գօլովինսկի պրօսպէկտի և Կազենսկայա փողոցի, տուն Թամամշեանի: Մուտքը Կազենսկի փողոցից № 2, (ա. օ.) 89—300

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ Ե. ԹՈՓՉԱԵՆԻ ԽՄԲԱԳՐԱԾ
ԼՈՅՍ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ 1906 Թ.
ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑԻ ԲՈՎԱՆԻՆԸ ԴԱԿՈՒԹԻ
I. եր. Օրացոյց—կազմեց Ն. Ք. Նիկողոսեան. ընտիր մտքեր. առածներ. հանելուկներ, շուտասելուկներ II, երես. 1) Ոսկի դարի շուրջը—Սլաքի, 2) Նշմարներ Հայաստանի աշխարհագրութիւնից—Մ. Վ, Քաջբերունու, 3) Օրվայ հարցեր—Բժ. Ա. Բուդաղեանի, 4) Ինչպէս օգնել կարծեցեալ մեռածներին բժշկ. Բ. Նաւասարդեանի, 5) Առողջապահական գիտելիքներ—Դ-ր Բեկլամի, 6) Կինը և տղամարդը—Տիկ. Հրանոյշի, 7) Հրատապ հարցերի շուրջը—պրոֆ. Վ. Զոմբարտի, 8) Քաղաքատնտեսական զրոյցներ—Ե. Թոփչեանի, 9) Ինչպէս են խարդախում մեր սնունդը—Քիմիկոս Կ. Աբովեանի, 10) Ինչպէս են խմորեղէններ պատրաստում—Մօլօխովեցի, 11) Ինչպէս են քաղցր խմիչքներ պատրաստում, 12) Երեխաներին ինչով պէտք է կերակրել—Դոկտ. Կ. Փաշայեանի. 13) Տէրսիմ և տերսիմցիներ—Անդրանիկի. 14) Եւրոպացիների կարծիքը հայերի մասին—Ե. Թ., 15) Հսկայ կենդանիներ—Վ. Լունկևիչի, 16 Զարմանալի բոյսեր—Ա. Քիշմիշեանի, 17) Կայծակ և ելեքտրականութիւն— Վ. Լունկևիչի, 18) Հողը և նրա տեսակները—Գ. Ղազարեանի, 19) Ինչպէս պէտք է հաւ պահել—Ռօմէրի, 20) Հոգեշահ զրոյցներ—Պետրով քահ., 21) Թիւրքահայերի վարչական կազմը, 22) Րաֆֆու յիշատակարանից, 23) Տարօրինակ գիտեր, 24) Դիտական խաղեր. 25) Թուաբանական խաղեր ու խնդիրներ, 26) Ընտիր հատուածներ, 27) Հայկական պատմ. էջերից, 28) Օգտակար խորհուրդներ, 29) Վանայ երգերից, 30) Զուարճալի հատուածներ, 31) Հետաքրքրական, 32) Ժողովրդական երգերից. 33) Աշուղական հարցումներ, 34) Բանաստեղծական նշմարներ, 35) Նմուշներ Օսմ. բանաստեղծութիւնից, 36) Ծիծաղի աշխարհից, 37) Որոնք են մարդու 3 պարտականութիւնները, 38) Րաֆֆու գրուածքներից ո՞րն է ամենալաւը, 39) Ի՞նչ է երջանկութիւնը և ինչպէս գտնել նրան, 40) Այլ և այլք:
Տախտակ «Ռուսահայ խմբագիրներ» Առանձին յաւելուած գրքոյկ «Ժողովածու» (1. Արձակ բանաստեղծութիւններ Ա. Ահարոնեանի և Վ. Փափազեանի: 2. Նմուշներ վրաց գրականութիւնից: 3. Մրցանակաբաշխութիւն): ՄՐՑԱՆԱԿ 50 կտոր գիրք:
Պատի օրացոյցի գինը 50 կոպ.:
ԳՐՊԱՆԻ ՕՐԱՑՈՅՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ
Օրացոյց հայրապետ. ամեն. հայոց. Ազգային հաստատութիւններ.—Ն. Ք. Նիկողոսեանի. Չափեր և նրանց համեմատութիւնը: Նոտարական գանձարաններ և մարկաներ: Բանուորների համար: Իրաւագիտական տեղեկութիւններ: Մուրհակ, Դրոշմատուրք: Բնակարանների հարկ: Փոստ, հեռագիր և հեռախօս: Երկաթուղի փոստային ճանապարհներ: Նաւագնացութիւն: Անցագիր: Զինուորագրական կանոններ: Բժշկարան. բժշկարան—Բժ. Լ. Քալանթարեանի. Ինչպէս են խարդախում մեր խմիչքները—քիմիկոս Կ. Աբովեանի: Ջուրը—Դոկտ. Ա. Ցակոբեանի: Կեանք և մահ—Բժ. Ա. Բուդաղեանի: Գիրք և առողջապահութիւն—Դոկտ. Կ. Փաշայեանի: Մարդու զգեստը—Դոկտ. Չէյլէրի: Շաքարը արբեցողութեան դէմ—Դոկտ. Գօլովինի: Ժամանակակից հարցեր Շուրջը. Ինչ է բարեգործութիւնը— պրոֆ. Շմօլլէրի: Ազգայնական հարցի մասին —պրոֆ. Վ. Զոմբարտի: Մրցման հետեւանքը տնտեսական կեանքում—Փր. Էնգելսի: Գիտութիւն և ինքնակրթութիւն—Ե. Թոփչեանի: Դրամագլուխ կամ կապիտալ—պրոֆ. Կարէյէվի: Ժամանակակից կնոջ վիճակը—տիկ. Հրանոյշի. Արիւթիւն և զանուռթիւն—պրոֆ. Մանտեգացցայի: Ինչ է փողը—Ե. Թոփչեանի: Գիտական. Օդային ճանապարհորդութիւն—Վ. Լունկևիչի. Արիւնը: Բոյսերի կեանքը—պրոֆ. Բօրօդինի: Երկրագործական խորհուրդներ—Գ. Ղազարեանի, Զարմանալի մաթեմատիկութիւն (պատկերներով): Կենսագրութիւններ. Յով. Աբգեան. Արծրունու, Սունդուկեանի, Պռօշեանի և Շիրվանզադէի: Օգտակար հաւաքներ: Տնային խորհուրդներ: Դիտական նորութիւններ: Օգտակար գիտելիքներ: Հետաքրքրական: Ծիծաղակարան:
Գրպանի օրացոյցի գինը 20 կոպ.:
գումարով գնողների ձեռնտուզեղջ:
Սեղանի «Լոյս» օրացոյց հանդէսը մեզնից անկախ պատճառով այս տարի լոյս չէ տեսել: «ԼՈՅՍ» ՀԱՆԴԷՍԸ ԱՄՍԱԳԻՐ դարձնելու համար՝ դիմում է արուած պատշաճաւոր իշխանութեան:
Դիմել՝ Тифлисъ Мадатовская ул. 5. Е. Топчяну. 7—10

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
„ՅՈՅՍ“
Գեղարուեստական, գրական, ժողովրդական պատկերազարդ շաբաթաթերթ
Տարեկան բաժանորդագինն է Թիֆլիսում՝ 3 ր., կէս տարվան 1 ր. 50 կ., ամիսը 30 կ.: Ռուսաստանում՝ 4 ր. կէս տարվան 2 ր., ամիսը 40 կ.: Արտասահմանում 10 ֆրանկ: Հասցէն՝ Тифлисъ, редакція иллюстрированнаго журнала «Уйсъ», Сурпъ-Нишанская ул. № 11. Թիֆլիսում բաժանորդ են գրվում խմբագրատանը կամ Արքունական թատրոնի դիմաց պ. Բ. Նաւտիկեանի «О Бонъ-Марше» մագազինում:
Առաջին համարներից կը սկսվի տպագրվել «Անիի կործանումը» պատմական վէպի բ. մասը: Նոյն գրքի ա. մ., տպագրված Պարիզում, կը ստանան մեր տարեկան բաժանորդները անցած յունվար և փետրվար ամիսների փոխարէն:
Յոյսը հրատարակվում է յուսահատ, ճնշված և անօգնական մարդկանց համար: Նա պիտի լինի ապաւէն պորտաբոյծ ձրիակերներից, հաստավիզ հարստահարողներից հալածուածներին, տանջուածներին և արիւնաքամ եղած անձնատներին: Նա պիտի աշխատի փրկութեան խարիսխ լինել այս յուսաբեկ կեանքի փոթորկոտ և լեռնացած ալիքներից խորտակվող նաւերին, միջոց տալով նրանց հասնել անքոյթ ապաստան. և նա պիտի ներշնչէ վհատուածներին հաստատուն հաւատ դէպի ինքնավստահութիւնը ու աննենգ մտքից բղխած սուրբ սէր դէպի իր նմանը:
Հաւատ, Յոյս և Սէր, այդ պիտի լինի մեր նշանաբանը և այդ ուղիով մենք պիտի ընթանանք առաջ և՛ ոգևորվենք և ոգևորենք:
2—2 Խմբագիր-հրատարակիչ՝ Բագրատ Այվազեանց

„ԸՆԿԵՐ“
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԳԻՐ, ԼԻԱԿԱՏԱՐ ԾՐԱԳՐՈՎ
«Ընկերի» նշանաբանն է նպաստել երիտասարդ սերունդի ինքնակրթութեան ու ինքնաշխատութեան գործին, այն ուղղութեամբ, որ բարոյապէս ու մտաւորապէս ընկճված, բայց ի բնէ աշխատասէր ու քանքարաւոր, հայ ժողովրդից յառաջ գայ մի անպայման լուսամիտ ու քաղաքակիրթ հասարակութիւն, որը ոչ միայն կարողանայ ստեղծել իր համար մի արժանաւոր ու վայելուչ դրութիւն, այլ և կարողանայ բարոյական ու մտաւոր լոյս սփռել հարևան-ընկեր ժողովուրդների մէջ և այսպիսով ծառայել իր հանրամարդկային բարձր կոչման: Կարճ ասած՝ «Ընկերը» յառաջ է ձգտելու այն ճանապարհով, որ ընդգծել են «Հիւսիսափայլը» ու «Մշակը»: Սկսելով փոքրից, մենք մեր բոլոր ջանքը գործ ենք դնելու, որ «Ընկերը» անընդհատ կատարելագործվի՝ թէ ներքուստ և թէ արտաքուստ: «Ընկերը» ունենալու է նոյնպէս օտարազգի գիտնական ու հրապարակախօս աշխատակիցներ:
Տարեկան բաժանորդագինը Թիֆլիսում ու Անդրկովկասի մեծ քաղաքներում (ուր մենք գործակալութիւն ունենք), առանց փոստի՝ 3 ր. փոստով՝ 4 ր. արտասահման 5 րուբլի: Ամսական բաժանորդ չէ ընդունւում: Բաժանորդ գրւողը իսկոյն ստանում է բոլոր լոյս տեսած համարները: Միջոց չունեցողը կարող է մաս-մաս վճարել: Յայտարարութիւնների համար շատ մատչելի գին է վերցնվում, միայն թէ չեն ընդունվում այնպիսի յայտարարութիւններ, որոնք մտաւոր ու հասարակական կեանքի հետ մօտաւոր կապ չունեն: Ազգային յայտարարութիւններ ընդունվում են միայն այն դէպքում, երբ ննջեցեալը մի որևէ դեր է խաղացել հասարակական կեանքի մէջ: Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Ингеръ». Խմբագիր-հրատարակիչ փիլ. դկ. Սեդրակ Թառայեանց: (ե. կ. կ.) 3—3

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
1906 Թ.
„ԱՇԽԱՏԱՆՔ“
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ, ԳԻՒՂԱԿԱՆ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ
ՈՐԸ ԴՈՒՐՍ Է ԳԱԼՈՒ ԱՌԱՋԻԿԱՅ 1906 Թ. ՅՈՒՆՎԱՐԻ ՄԷԿԻՑ
Ծրագիր՝ 1) Առաջնորդող յօդուածներ քաղաքատնտեսական ժամանակակից խնդիրների մասին. 2) Գիւղական կեանք և կարիքներ. 3) Գիւղական տնտեսութիւն և տեխնիկա. 4) Զեմստվօ և համայնք. 5) Գիւղական դպրոց, դատարան և ոստիկանութիւն. 6) Գիւղական պրօլետարիայի շուրջը. 7) Առողջապահութիւն և անասնաբուժութիւն. 8) Թղթակցութիւններ գաւառից. 9) Մամուլի շուրջը. 10) Պատկերներ և զրոյցներ. 11) հարցեր և պատասխաններ. 12) Շուկայ և տեղեկատու և 13) Յայտարարութիւններ:
«Աշխատանքը» նուիրված է լինելու հայ գիւղացիութեան և նրա միջից դուրս եկած պրօլետարիատի շահերին և կարիքներին:
Գաւառի և գիւղի հետ սերտ և կենդանի յարաբերութիւններ հաստատելը «Աշխատանքի» ձգտումն է:
Ուսուցիչները, գիւղական քահանաները և գիւղական ինտելիգենցիան «Աշխատանքի» թղթակիցներն ու կենդանի ոյժերն են լինելու:
«Աշխատանքին» աշխատելու հրաւիրված են որոշ ուղղութեան մարդիկ:
«Աշխատանքը» վարձատրելու է իր բոլոր մշտական աշխատակիցներին և զաւառական թղթակիցներին:
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ

Ռուսաստանի համար տարեկան՝ 4 րուբ. —		Արտասահմանի համար տարեկան 5 րուբ. —		
կէս տարին 2 » —		կէս տարին 2 »	50 կ.	
ամիսը — —	40 կ.	ամիսը — —	50 »	
հատով №-ը — —	10 »	հատով №-ը — —	15 »	

Բաժանորդագինը կարելի է վճարել մաս-մաս. սկզբում 2 րուբլի, մայիսին՝ 1 ր. և սեպտեմբերին՝ 1 րուբլի.
1906 թւականի այն բաժանորդները, որոնք կը գրվեն մինչև այս տարվայ դեկտ. 20-ը, վճարելով տարեկան ամբողջ բաժանորդագինը միանուագ, կը ստանան իբրև պրեմիա «Իրաւական պետութիւն» յայտնի գիրքը—80 երեսից:
«Աշխատանքի» բաժանորդագինը ընդունվում է Թիֆլիսում խմբագրատան մէջ, իսկ քաղաքներում նաև բոլոր գրավաճառների մօտ:
Հասցէն՝ Тифлисъ, въ редакцію еженедѣльнаго журнала „Ашхаданкъ“, Бебутовская ул. д. № 27: Արտասահմանից՝ Tiflis, rédaction de la revue «Aschchatank», Bebutovskaia 27.
Խմբագիր-հրատարակիչ՝ Ասոս Աբգանեան
9—12
(Կ. Ո.)

Տպարան «ՀԷՐՄԷՍ» ընկ.
Электропечатня типографскаго Т—ва Гермесъ, Мад. ул. № 15.